Ստալինի ժամանակ էլ մարդկանց գուլագ էին ուղարկում՝ դե, եկեք այս տրամաբանությամբ այսօր շնորհակալ լինենք, որ մեզ էլ գուլագ չեն ուղարկում: Ես այդ համեմատությունները լավ չեմ հասկանում: Ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ մարդկանց ձեռքերը ոլորած՝ ԱԱԾ-ականները դիմակով բռնության են ենթարկում՝ խոսքի համար:

Կարդացեք՝ էջ 4

Չնայած Փաշինյանը համաձայնել է ընդունել Ադրբեջանի երաշխավորությունը, բայց գործարքի կայացմանը խանգարում է 2 հանգամանք՝ հայ հասարակության դիմադրությունը եւ Ռուսաստանի ռազմական ներկայությունը Հայաստանում, որովհետեւ Ադրբեջանը չի կարող Հայաստան զորք մտցնել եւ աջակցել Փաշինյանին՝ պահելու իր իշխանությունը:

Կարդացեք՝ էջ 5

Տպավորությունն այն է, որ իր վերարտադրման համար նպաստավոր պայմաններ փնտրող Փաշինյանի հերթական քաղաքական շոուն տապալվեց Մոսկվայում՝ Պուտինի ուղերձներով ու շեշտադրումներով: Մյուս բեմադրությունը կտեսնենք մայիսին, երբ Երեւանում կայանան Եվրոպական քաղաքական համայնքի, ինչպես նաեւ ՀՀ-ԵՄ գագաթնաժողովները:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 55 (4190), 7 ապրիլ, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Շաբաթ օրը մարզահամերգային համալիրում Վարչաբենդի եւ մի քանի երաժշտական խմբերի մասնակցությամբ համերգը նախորդից մի քանի դրվագով տարբերվել է: Նախ, ջանք չեն խնայել՝ մարզերից էլ են համակիրներ բերել, ինչպես նաեւ՝ պետապարատի աշխատողներին. ում կարողացել են, պարտադրել են, անգամ՝ նրանց հարազատներին, ծնողներին: Սրանով էր պայմանավորված այն, որ համերգասրահում քիչ չէին տարեցները: Նպատակ էին դրել ցույց տալ, որ կարողանում են մեծ դահլիճ լցնել: Բայց, ի տարբերություն նախորդի, այս անգամ ավելի քիչ ՔՊ-ականներ են մասնակցել, էլիտան պակասել է, եթե չասենք՝ հաշված ՔՊ-ականներ են ներկա եղել. Արսեն Թորոսյանը, Սրբուհի Գալյանը, Սոնա Ղազարյանը, Վահագն Ալեքսանյանը, Ռուստամ Բաքոյանը ու եւս մի քանիսը: Եվ երրորդ. մասնակիցներն անչափ նեղվել են այն փաստից, որ համերգի ընթացքում ամեն ինչ վճարովի է եղել, մինչդեռ նախորդ անգամ ջուրն անվճար են բաժանել: Փոխարենը ՔՊ-ի սրտիկի լոգոյով քաղցրավենիք են տվել մասնակիցներին: Համերգը սկսվել է նախատեսվածից մի փոքր ուշ, եւ ողջ ընթացքում դահլիճում քաղաքացիական հագուստով աչալուրջ հսկել են ՊՊԾ աշխատակիցները՝ լարվածության մեջ պահելով մասնակիցներին: Այնտեղ է եղել նաեւ Սուրբ Աննա եկեղեցում երկվորյակներին հարվածած նեղաչք թիկնապահը:

Գրել էինք, որ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մարտի 3-ին իր օգնական Յուրա Բազինյանին ազատել է պաշտոնից: Յուրա Բազինյանը Նիկոլ Փաշինյանի եւ Հայկ Ղալումյանի մանկության ընկերն է: Նա արդեն նոր պաշտոն ունի՝ նշանակվել է Հայաստանի էլեկտրական ցանցերի «Աղստեւ» մասնաճյուղի տնօրենի խորհրդական: ՀԷՑ-ը, Սամվել Կարապետյանից խլելուց հետո, դարձել է ՔՊ-ական կադրերին բարձր աշխատավարձով աշխատանքի տեղավորելու հիմնարկ: Բազինյանը նաեւ 2022 թվականից Տավուշի մարզի թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի (նստավայրը՝ Իջեւան) նախագահն է: Տավուշի մարզի մյուս՝ թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նստավայրը Նոյեմբերյան քաղաքում է: Այդ հանձնաժողովի նախագահն էլ ոստիկանության նախկին սպա Արկադի Հարությունյանն է: Նա էլ Սամվել Կարապետյանից ՀԷՑ-ը խլելուց հետո էլցանցերի «Աղստեւ» մասնաճյուղի Նոյեմբերյանի էլցանցի ղեկավար է նշանակվել: Քաղաքական պայքարում չեզոքություն պահպանելու պարտավորություն ունեցող ԸԸՀ նախագահները նշանակվել են ՔՊ կուսակցության փաստացի կցորդ դարձած, Ռոմանոս Պետրոսյանի կողմից կառավարվող էլցանցի պաշտոնյաներ:

Քծնանքի մրցույթ

Անասելի մեծ չափերի է հասել կեղծիքը մեր հասարակության մեջ: 2-3 միլիոն մարդու հաշվարկով, տասնապատիկ ավելի կեղծիք է պտտվում Հայաստանի օդում: Մեկը կեղծ խաղաղություն ու կայունություն է քարոզում, երկրորդը վիճակագրական կեղծ տվյալներ է օդ նետում, երրորդն ատում է բոլորին, բայց ողջ օրը խոսում է սիրուց ու հարգանքից, չորրորդը կեղծ ինքնավստահություն ու հաղթանակ է ցուցադրում: Իսկ հասարակությունն այս ստի ու կեղծիքի մեջ խարխափում է՝ չկողմնորոշվելով, թե որն է փրկության հանգրվանը: Ահա՝ լսում եմ ՔՊ ցուցակում հայտնվելու համար մարտերում պարտված մի երիտասարդ երեսփոխանի խոսքը, որին մերժել են ու փողոց շպրտել՝ որպես անպետք իր, եւ նա վիրավորանքից հիշել է մի մերժված նախագիծ ու, ՔՊ-ի «ինադու», կրկին բերել է խորհրդարան, «դուք՝ ինձ, ես՝ ձեզ» սկզբունքով: Բոլորին պարզ է, որ մերժողն էլ, ընդունողն էլ մի անձ է՝ Նիկոլ Փաշինյան անունով: Բայց այս մերժվածն այնքան ողորմելի է, որ անգամ այսօր, երբ լուսանցքում է հայտնվել, գովերգում է Փաշինյանին, փորձում է ներկայացնել, որ հրաշալի հարաբերություններ ունի նրա հետ: Այս մյուսը նույնպես «մերժվածների» շարքից է՝ առաջին տասնյակում տեղ չի գտել, եւ պարզ է, որ առաջնային դիրքի այլեւս չի կարող հավակնել, իսկ ինքը հանրապետության երկրորդ-երրորդ դեմքն էր վերջին 5 տարիներին: Բայց երեւի հույս ունի, որ անպաշտոն ու անփող չի թողնի իրեն «ստրկատերը»՝ մի տաքուկ տեղ կգտնի իր համար, ուստի համագումարում փառաբանում է «ստրկատիրոջը»՝ մի վերջին անգամ քծնում ու գովերգում: Մյուսներն էլ, իհարկե, շատ չեն տարբերվում՝ քծնում են, ժպտում, ծառայում՝ ինչքան ուժ ունեն: Սրանք իշխանություն, փող, կարգավիճակ շատ են սիրել, հետդարձի ճանապարհ չունեն, մի ելք ունեն՝ Նիկոլի եւ ՔՊ-ի վերարտադրությունը:

Ինչպես տեսանք, շաբաթ օրը ՔՊ էլիտան Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մասնակցեց զատկական պատարագին՝ փորձելով ցույց տալ, թե իբր հավատացյալ են, իրենց կռիվը ոչ թե Եկեղեցու, հոգեւոր արժեքների դեմ է, այլ՝ առանձին հոգեւորականների: Մեր աղբյուրներն ասում են՝ եթե տարին չլիներ նախընտրական, ապա Փաշինյանը, նախորդ տարիների նման, այս տարի էլ կմերժեր զատկական պատարագը: Այդ օրը նաեւ միջադեպ գրանցվեց, որը թեպետ աննկատ անցավ, բայց, մեր տեղեկություններով, իշխանությունն իրավապահ մարմինների միջոցով ողջ ռեսուրսը մոբիլիզացրել է՝ հայտնաբերելու այն քաղաքացուն, որը պատարագ մատուցող Անուշավան Դանիելյանի հասցեին եկեղեցու բակում գոռաց. «Ամոթ, տիրադավ»: Նա այն 10 եպիսկոպոսներից է, որն անցել էր Փաշինյանի կողմը՝ ընդդեմ կաթողիկոսի: Բանն այն է, որ ոչ լրատվամիջոցները, ոչ էլ Փաշինյանին լուսաբանող օպերատորները չեն ֆիքսել խիզախ քաղաքացու դեմքը, եւ հիմա, մեր տեղեկություններով, արդեն քանի օր է՝ իրավապահները փորձում են տարբեր խմբագրություններից պարզել՝ նկարե՞լ են այդ համարձակ մարդուն եւ կտրամադրե՞ն իրենց կադրեր:

ՊԱՍԻՎՆԵՐԸ ԿՊԱՏԺՎԵՆ, ԱԿՏԻՎՆԵՐԸ ԿԽՐԱԽՈՒՍՎԵՆ

Շաբաթ օրը «Քաղպայմանագրի» համաժողովից եւ նախընտրական ցուցակի կազմավորումից հետո ՔՊ խմբակցության մի մասն անկումային տրամադրության մեջ է եղել. գործող պատգամավորների մեծ մասը ցուցակի հետին հորիզոնականներում է հանգրվանել, եւ հույս չունեն, որ հունիսի 7-ի ընտրություններից հետո կհայտնվեն խորհրդարանում: Այս տրամադրությունների մասին տեղյակ է նաեւ Նիկոլ Փաշինյանը, որը, ըստ մեր աղբյուրի, վարչության անդամներին հորդորել է բացատրական աշխատանքներ տանել թիմակիցների հետ, հավաստիացնել, որ որեւէ մեկն անգործ չի մնա, եթե ընտրություններին ընդառաջ «վիզ դնեն» ու հասնեն նրան, որ ՔՊ-ն կրկին իշխանություն վերցնի: Հանձնարարել է նաեւ ակտիվացնել աշխատանքներն ընդդիմության դեմ պայքարում, որեւէ ռեպլիկ, որեւէ հայտարարություն անպատասխան չթողնել: Ավելին՝ նախահարձակ լինել: Ասել է, որ ինքն անձամբ հետեւելու է բոլորի պահվածքին, պասիվները կպատժվեն, ակտիվները կխրախուսվեն:

ԱՌԱՆՑ ԱՄԱՉԵԼՈՒ ՔԱՐՏԵԶԸ ԿՏՐՏԵԼ, ԽՓԵԼ Է ՊԻՋԱԿԻ ՎՐԱ, ԴՈՒ Ո՞Վ ԵՍ, ԴՈ՞Ի ԵՍ ԱՅԴ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԳԾԵԼ

*«Հրապարակի» զրուցակիցն է դիվանագետ, վերլուծաբան **Վարդան Հակոբյանը**:*

Հայկա ԱԼՈՅԱՆ

- Փաշինյան-Պուտին հանդիպման ժամանակ ՌԴ նախագահի հնչեցրած կոշտ հայտարարություններից հետո արդեն առաջին քայլերն են արվում՝ Հայաստանից արտահանվող ծաղիկները կասկածի տակ են դրվել, թե արդյո՞ք դրանք ՀՀ-ում են արտադրվել, ու արգելվել է մուտքը ՌԴ:

- Պուտինի ասելով՝ Ռուսաստանի դիրքորոշումն այն է, որ Ռուսաստանը միջոց չէ՝ Ռուսաստանի հաշվին սպեկուլյացիա անելու համար: Այսինքն, եթե դուք ԵԱՏՄ անդամ եք, մենք թույլ ենք տալիս՝ տրանսպորտային կապը կա, շուկան կա, դա չի նշանակում, որ պետք է այդ շուկան ծակեք ու կողքից օգտվելով, այս կամ այն պետությունների ապրանքներ, առանց հարկվելու, վաճառեք ԵԱՏՄ շուկայում: Դուք ծաղիկներից եք ասում, իսկ Թուրքիայից բերվող հսկայածավալ ապրանքները, որ գալիս են ու տարվում են Ռուսաստան, դրա դիմաց ո՞վ պետք է վճարի... եվրոպական որոշ ապրանքներ: Հայաստանը դարձել է տրանզիտ, ըստ էության, մաքսանենգությամբ են զբաղված՝ դրսի ապրանքները բերես եւ առանց հարկ վճարելու Ռուսաստանում վաճառես, դու դրանից օգուտ ստանաս, այդ երկրներն օգուտ ստանան: Սա առաջին անգամը չէ, քանի անգամ զգուշացրել են, հիշեք լոլիկների պատմությունը: Նույնը անում էր Մոլդովան, երբ որ Ռումինիայի միջոցով այդ ապրանքները բերում էր, հետո մտցնում ռուսական շուկա: Նույնիսկ Բելառուսն է նման բաներ արել, այդ ամեն ինչը ռուսները կասեցրին: Այստեղ հայ կամ բելառուս տարբերությունը չէ, բելառուսների նկատմամբ էլ է այդպես արվել, Էստոնիան էր դրանից չափազանց օգտվում: Մի ժամանակ կար, երբ Էստոնիան աշխարհում երկրորդ տեղն էր գրավում՝ գունավոր մետաղներ արտահանելու մասով, Հայաստանն էլ, այսինքն՝ կազմակերպել էին ռուսական հյուսիսից այդ ամբողջ հին, չօգտագործվող մետաղները կամ ինչ-որ ճանապարհով օգտագործվող, հանում էին դուրս, Էստոնիան, որ ինքը դրանք չուներ: Նույնը Լեբեդը կազմակերպել էր Սիբիրից, արտահանում էր նյութեր Հայաստանից դեպի Իրան: Նման բաներ եղել են, եւ Ռուսաստանն ասում է, որ դրանք կընդհատեմ: Իսկ դրանք շատ մեծ գումարներ են, որ նստում էին սրանց ձեռքում: Կամ այդ պարգեւավճարները, որ տալիս եք ձեր թիմի անդամներին, այդ գումարները որտեղի՞ց՝ Ռուսաստանի տարածքում մաքսանենգ ապրանքներ վաճառելու միջոցով, չէ՞ որ այդ ապրանքները չեն հարկվում:

- Այս դեպքում Փաշինյանի ու իր քաղաքական թիմի ինքնավստահությունն ինչո՞վ եք բացատրում, այսինքն՝ իրենք մտածում էին, որ ռուսները չեն հասկանում, թե ինչ է կատարվում, աչք են փակելու, որ Հայաստանն իրենցից օգտվում է, ու իրենց համար թշնամական Եվրամիություն են գնում:

- Հիշեք. 2018 թվականին Պուտինը որ եկել էր Հայաստան, այդ ծաղրական վերաբերմունքը նրա նկատմամբ, հետո վազել օդանավակայան, փաթաթվելը եւ այլն, հիշո՞ւմ եք ժողովրդի մեջ ինչ էին տարածում՝ ասում էին, որ Փաշինյանն այնքան խելացի է, որ Պուտինին կռացրեց՝ այդ բառով եմ ասում, դուք հասկացեք՝ ինչ բառով էին ասում, որ մատների վրա ֆռռացնում է Պուտինին: Քաղաքական խուլիգանություն, առանց հասկանալու, որ Պուտինն այդքան մեծ տերության նախագահ է ու մեծ տերության հարցերով է զբաղված, եւ հիմա, որպեսզի չշեղվի ինչ-որ մի ճանճի տզզոցից, ուշադրություն չի դարձրել: Ինչպես ուշադրություն չի դարձրել որոշ այլ պետությունների կամ քաղաքական գործիչների նկատմամբ, բայց հիմա եկել է ժամանակը, եւ ասում է՝ տղա ջան, որոշել ես, որ գնում ես դեպի Եվրոպա, լավ, այդ դեպքում ես ասում եմ, որ դա մեր այս քաղաքականության հետ անհամատեղելի է:

- Իսկ դա ինչպե՞ս կազդի Հայաստանի ներքաղաքական իրավիճակի վրա՝ հաշվի առնելով, որ ընտրություններ են առջեւում:

- Այս խոսակցությունից հետո՝ Պուտինի կողմից կարմիր գծեր ներկայացնելուց ու պահանջներ դնելուց հետո, ինձ թվում է, որ ոչ թե այս իշխանություններն ինչ-որ տեղ կփոխեն իրենց քաղաքականությունը, կասեն՝ լավ, էլ չենք անի, ոչ, հակառուսականությունը նոր թափ է ստանալու, որովհետեւ այդ մարդը՝ մարդ ասվածը, պարտավորվել է եվրոպացիների առաջ, պարտավորվել է թուրքերի առաջ: Թուրքերին ձեռք են տալիս այս հակասությունները, որ պետք է անպայման կտրի, խզի կապերը Ռուսաստանի հետ: Եվ սա ինչ է անելու, ռուսաֆոբիան, հակառուսականությունն ուժեղացնելու է: Հիշեք. մինչեւ ընտրությունները կլինեն ցույցեր դեսպանատան մոտ, հակառուսական միտինգներ: Մեկը կա, որ հեռուստատեսությամբ այս մի ամիս է՝ ասում է. ռուսները հիբրիդային պատերազմ են սկսել: Երբ քաղաքական գործիչը մեկ ուրիշին գնահատական է տալիս, դա չի նշանակում հիբրիդային պատերազմ: Հիբրիդային պատերազմն այն է, ինչ անում է Կայա Կալլասը, ինչ անում են եվրոպացիները, ինչ անում էին ամերիկացիները... գունավոր հեղափոխություն, ֆինանսավորում՝ պեռաշկիներ բաժանել եւ այլն:

- Ռուսաստանի զգուշացումները՝ կոնկրետ քայլերի տեսքով, Հայաստանի ներսում ինչ-որ աջակցությամբ կդրսեւորվե՞ն:

- Ես կոնկրետ քայլի հավանականություն չեմ տեսնում: Պուտինի քաղաքական վարվելակերպն է դա: Այդ ինչի՞ պետք է Հայաստանում անի, եթե իրենց համար կարեւորագույն պետությունում՝ Ուկրաինայում չարեց կամ այլ երկրներում: Դա իր ոճը չէ:

- Այսինքն՝ Փաշինյանի խաղերի համար վճարելու ենք մենք՝ շարքային քաղաքացիներս:

- Այո, զուսպ էր խոսում, վերջին հաշվով, եթե այդ զսպվածության տակ նայենք, ասում էր՝ հայ ժողովուրդ, դուք մեր բարեկամ ժողովուրդն եք եղել, մենք միշտ պատրաստ ենք եղել, սա ենք արել, այն ենք արել, այսինքն՝ մի ուրացեք այդ ամենը, բայց եթե դուք եք ընտրում այս ճանապարհը, մենք ոչ մի բանով այլեւս ձեր առաջ պատասխանատվություն կամ պարտավորություն չունենք: Հիմա եթե դուք դա գնահատելով չեք ընտրում սրան եւ վռնդում եք իշխանությունից, այդ հարցում մենք նորից ամեն կերպ ձեզ օժանդակելու ենք:

- Կրեմլում չգիտե՞ն, որ Փաշինյանն իր ձեռքում է կենտրոնացրել բոլոր ուժային կառույցները, ժողովուրդը դեմ է Փաշինյանին, որ նաեւ ընտրությունները կեղծելու հնարավորություն ունեն:

- Այսինքն, Դուք ինչպե՞ս եք պատկերացնում՝ զորք վերցնի, գա մտնի, ընտրություններին խառնվի՞: Նա նման բան չի անի, նա անում է մաքսիմումը: Ասում է՝ ձեր ընտրությունից է կախված՝ ԵԱՏՄ, թե՝ ԵՄ, մենք ձեզ տարածաշրջանում տեր կկանգնե՞նք, թե՞ ոչ, ձեր ընտրությունից է կախված՝ մեզ հնարավորություն կտա՞ք, որ պաշտպանենք միջազգային հարաբերություններում ձեր շահերը, թե՞ ոչ: Եթե դուք չեք ուզում, ես ոչինչ չեմ կարող անել: Այսինքն, եթե տեսնի, որ դա էլ չկա, ու արդեն բանը բանից անցնում է, նա ուղղակի զորքով կմտնի, կօկուպացնի, ինչպես բոլշեւիկներն արեցին: Այն ժամանակ մի քիչ այլ հարաբերություններ էին, բայց զոռով մտան, միջանցքն էլ բացեցին Զանգեզուրի, Նախիջեւանն էլ, Ղարաբաղն էլ տվեցին Ադրբեջանին, ասացին՝ այսպես պետք է լինի, ու վերջ, արեցին: Հիմա դուք բերում եք դրան, որ Ռուսաստանը գա, ուժով իշխանություն փոխի, սահմաններ գծի եւ այլն: Մինչեւ հիմա այդ անձը, որ առանց ամաչելու քարտեզը կտրտել, խփել է պիջակի վրա, դրա ամբողջ արտաքին արեւմտյան սահմանները ռուս-թուրքական, ռուս-իրանական սահմաններն են: Դա քո սահմանները չեն, դու ո՞վ ես, որ այդ սահմանները գծել ես, ախր, կա միջազգային պայմանագիր՝ 1921 թվականի՝ ռուս-թուրքական: Ինքն իրեն դիրքավորում է, թե ես շուստրի տղա եմ, իմ թիկունքում այնքան ուժեր կան...

- Այն էլ խոփը քարի՞ն առավ:

- Այո, դե Պուտինի բնավորությունն այդպիսին է՝ հանդարտ խոսեց, ամաչելով, բայց երբ տեղը գալիս է, այնպիսի վիճակի մեջ է դնում, որ ... Այդ զրույցը, որ ցույց տվեցին, ցուցադրական մասն էր, իսկ թե առանձնազրույցի ժամանակ ինչ է ասել, մնում է միայն երեւակայել: Ամենայն հավանականությամբ, ասել է՝ եթե թույլ տվեցինք, որ մի քանի քայլ անես, չի նշանակում, որ գերտերության հետ կարող ես ոտք մեկնել:

ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՏՈՒԳԱՆԵԼ

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցությունում երեկ քաղաքապետ Տիգրան Ավինյանը, անդրադառնալով հասարակական տրանսպորտում ուղեվարձերի հավաքագրման գործընթացին, ասել էր, որ խիստ նվազել են հավաքագրումները, եւ դրա պատճառներից մեկն այն է, որ վարորդները չեն մասնակցում այդ պրոցեսին, ասել էր, որ չի կարող լինել այնպես, որ աշխատակիցները ստանան համապատասխան վարձատրություն, ներառյալ արտաժամյա վճարումներ, սակայն չմասնակցեն այդ գործընթացին, որն իրենց անմիջական պարտականությունների շրջանակում է: Թերհավաքագրումները նշանակում են, որ երեւանցիների մի մասը բոյկոտել է՝ չի վճարել 150 դրամ ուղեվարձը: Նախորդ տարվա օգոստոսից Երեւանի քաղաքապետարանը տեսուչներ ուղարկեց Երեւանի փողոցներ, որոնք ավտոբուսներում տուգանում էին չվճարողներին. 3 հազար դրամ՝ ուղետոմսը չվավերացնելու համար, 10 հազար դրամ՝ ուղղակի չվճարելու, եւ 15 հազար դրամ՝ ուրիշի զեղչված ուղետոմսն օգտագործելու համար: Սա աշխատեց մի քանի ամիս, հիմա էլ Ավինյանը հույսը դրել է վարորդների վրա, թե նրանք կներգրավվեն վճարման գործընթացում, եւ հավաքագրումը կլավանա:

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ **Գեւորգ Ստեփանյանը** մեզ ասաց. «Եկեք առաջնային խոր շնորհակալություն հայտնենք երեւանցիներին, որ իրենք սատար կանգնեցին մեզ եւ այդ բոյկոտին, բոյկոտի արդյունքում իրենց իրավունքներին տեր կանգնեցին եւ սկսեցին ոչ բարեփոխված, թանկացած, առանց կանգառներ գոյություն ունեցող տրանսպորտի համար չվճարել: Ինչ վերաբերում է տեսուչներին, ապա նրանք մեր քաղաքացիներն են, Երեւան քաղաքի տարբեր վարչություններում աշխատող քաղաքացիներն են: Նրանք, շփվելով քաղաքացիների հետ, մի քանի անգամ տուգանելով, հասկացան, որ երեւանցիներին դեմ են գնում, այդ մարդիկ չմտան այդ բեռի տակ, հրաժարվեցին, եւ դա չստացվեց: Տեսուչներն էին մեղավոր, հիմա էլ մեղավոր են կարգում վարորդներին, որ երեւանցիների կյանքի հետ խաղ անեն. 70 հոգանոց ավտոբուսը վարելով, ասում են՝ թեքվեք, տեսեք՝ ով չի վճարում: Գնան ի՞նչ անեն, իրար շալակ ելած քաղաքացիներին սահմանազատե՞ն (իրենք այդ բառը սիրում են) եւ ասեն՝ վճարեք: Չի լինելու այդպիսի բան: Թող վարորդները չենթարկվեն ապօրինի հրահանգներին: Ինձ հասած տեղեկություններով՝ տեսուչների մի մասը հրաժարվել է տուգանել, մի 3-4 հոգի էլ մտնում են ավտոբուսները, տեսնելով միահամուռ բողոքը՝ դուրս են գալիս: Մենք ասել էինք Տիգրան Ավինյանին, որ թերհավաքագրումները մեծանալու են»:

Զրուցեցինք նաեւ Երեւանի տրանսպորտի միակ կին վարորդի՝ **Անժելայի** հետ, որն ասաց. «Ես էսքան ժամանակ չեմ հորդորել քաղաքացիներին վճարել, հիմա բյուլետենի մեջ եմ՝ չեմ գնում աշխատանքի, ոնց ասեն, էդպես կանենք»: Ինչպե՞ս է պատկերացնում վարորդների ներգրավումը վճարման պրոցեսին: «Չեմ պատկերացնում, մինչեւ չգնամ, չիմանամ՝ ինչ է»:

Արձակուրդ կգնան, որ քարոզարշավը ղեկավարեն

ՔՊ-ի մարզային շտաբների պետերը մարզպետներն են: Նրանք շուտով արձակուրդ են վերցնելու՝ իրենց հաշվին, որ կարողանան ողջ էությամբ նվիրվել մարզային շտաբների աշխատանքը համակարգելու գործին: Համայնքային շտաբները ղեկավարելու են ՔՊ-ական համայնքապետերը: Սյունիքի մարզային շտաբի պետ, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն է միայն, որ խառը կազմի հետ է աշխատելու՝ ՔՊ-ական համայնքապետերի՝ Մեղրիի համայնքապետ Խաչատուր Անդրեասյանի ու Տեղի համայնքապետ Դավիթ Ղուլունցի հետ: Չնայած Սիսիանի համայնքապետ Հովսեփ Առաքելյանն էլ իշխող ուժից է, բայց Սիսիանի շտաբի ղեկավարն ԱԺ պատգամավոր Կարեն Համբարձումյանն է, Քաջարանինը՝ ՔՊ-ական ավագանի Արմեն Առաքելյանը, Գորիսինը՝ պատգամավոր Արմեն Խաչատրյանը, Կապանինը՝ ԶՊՄԿ-ում կառավարության ներկայացուցիչ Նարեկ Բաբայանը: Փաստորեն, պատգամավորները, կառավարության ներկայացուցիչն ու ՔՊ-ական համայնքապետերը դե յուրե ու դե ֆակտո պիտի ենթարկվեն Ռոբերտ Ղուկասյանին:

ԲԱՆԱԿ

ՔՊ-ՈՒՄ ԿՐԿԻՆ ԻՐԱՐ ՏՈՐ ԵՆ ԹԱՓՈՒՄ

Ազգային ժողովի պաշտպանության հանձնաժողովում երեկ տեղի ունեցած քննարկումն ու ՔՊ-ականների փոխադարձ մեղադրանքները, կուսակցության «կեղտոտ սպիտակեղենն» ի տես բոլորի «փռելը» ցույց տվեցին, որ Նիկոլ Փաշինյանի ոտքի տակից հողը փախչում է, եւ ներկուսակցական սոդոմ-գոմոր է տիրում: Բանն այն է, որ ՔՊ-ից մեկուսացած կամ «սպիսատ եղած» Հայկ Սարգսյանը՝ Շիշ բռնողը, որին վարչությունը մերժեց՝ չընդգրկեց ՔՊ ընտրացուցակում, կրկին օրակարգ է բերել իր բազմաչարչար, տխրահռչակ նախագիծը՝ փողով բանակից ազատվելու վերաբերյալ, որն ամիսներ առաջ Ազգային ժողովը մերժել էր, քանի որ նախագծի շուրջ բարձրացած աղմուկը կառավարությանը ստիպել էր հետոդորմյա անել իրենց նախնական դրական դիրքորոշումը, եւ կոճակ սեղմող խորհրդարանական մեծամասնությունը մերժել էր այն: Մերժողների թվում էր, որքան էլ աբսուրդային հնչի, նաեւ նախագծի հեղինակը՝ Հայկ Սարգսյանը:

Թե ինչու էր նա կրկին օրակարգ բերել նախագիծը, երեկ չհայտնեց, միայն հիշեցրեց, որ նախագծին կառավարությունն ի սկզբանե դրական եզրակացություն է տվել: Գուցե սրանով փորձում է «ատամ ցույց տալ»՝ իրեն լուսանցք նետելու համար: ՔՊ մեր աղբյուրները, մինչդեռ, կասկած չունեն, որ Հայկ Սարգսյանը փորձում է սրանով ապահովագրել իրեն, քաղհալածյալի կերպարի մեջ տեղավորվել, քանի որ թե՛ իր, թե՛ հոր նկատմամբ իրավապահները որոշակի «աշխատանքներ» են սկսել տանել: Զարեհ Սարգսյանը, որ ժամանակին բարձր պաշտոն է զբաղեցրել՝ եղել է Կենսաթոշակային հիմնադրամի նախագահը, իր կենսագրության մեջ մութ կետեր ունի, որոնց մասին հիշել է Նիկոլ Փաշինյանը, որը ժամանակին շատ մոտ է եղել նրա հետ: Բացի այդ՝ ՔՊ-ականները կասկածներ ունեն, որ Հայկ Սարգսյանը խաղեր է տալիս կամ կարող է տալ՝ որոշ ընդդիմադիրների հետ, այդ պատճառով էլ փորձելու են նրան իր տեղը ցույց տալ: Հենց այս պատճառով էլ Հայկ Սարգսյանը հավաքել է մերժված նախագծի փաստաթղթերի տրցակը ու կրկին եկել քննարկման՝ էլ ավելի բաց խաղաքարտերով: Երեկ նա, կարելի է ասել, մերկացրեց ոչ միայն թիմակիցներին, այլեւ՝ պաշտպանության համակարգն ու բանակը՝ որպես ինստիտուտ:

Հայտարարեց, որ Երեւանում զորակոչի թիվը կրիտիկական ցածր է. «Երբ մենք ասում ենք՝ հանրապետությունում 30-35% է զորակոչը, դա մարզերի հաշվին է այդքան, Երեւանում 10-16% է: Տարի ենք ունեցել, որ 10 տոկոս է եղել, այսինքն՝ անհավասարությունը կա: Այս օրենքի տապալմամբ ուզում են ասեն, որ, այ, չեղավ այդ անարդարությունը: Այդ անարդարությունը խորանալու է, ինչի համար ցավում եմ»: Հայկ Սարգսյանը նշեց, որ իր առաջարկի դեպքում անձը 1 ամիս կծառայի, կմտնի պահեստազոր, ու երբ կլինեն ենթադրյալ մարտական գործողություններ կամ էսկալացիա, այդ մարդուն պետությունը կունենա իր պահեստազորում. «Այսինքն, ինքը ոչ թե կլիներ ՌԴ քաղաքացի, այլ կլիներ մի ամիս պատրաստված զինծառայող, որը կկարողանար համալրել զինված ուժերի շարքերը: Իսկ այդ գումարով հնարավոր կլինի պրոֆեսիոնալ բանակ ստեղծել»: Նա անգամ մուննաթ էր գալիս թիմակիցների վրա: «Բա չես ասում, որ քո բանակի աչքն ես հանում, քո զորակոչը կրիտիկական վատ վիճակում է, քո զորքի թիվը 44 հազարից 14 տարում իջել է 14 հազար: Ասում եմ՝ եկեք միջոց ձեռնարկենք, իրար մեջ խոսում են, ասում են՝ Սարգսյան Հայկն իր PR-ի համար է անում: Բանակի համար եմ անում, PR-ի համար անելուց լինեի, 50 տարի կլինեի էս խմբակցության պատգամավոր: Էդ հարցերը, որ բարձրացնում եմ, դրա արդյունքում հարաբերություններ են փչանում նախարարների հետ, գործադիր իշխանության ներկայացուցիչների հետ»,- հայտարարեց նա:

Ասաց նաեւ, որ բանակում չեն ուզում ծառայել, քանի որ վատ պայմաններ են, զինվորները շաբաթը մեկ են լողանում: Ինքը բազմաթիվ բարձր դասարանցիներ գիտի, որոնցից դպրոցն ավարտելուց հետո որեւէ մեկը չի զորակոչվում բանակ: «Եթե ծանոթներ ունեք, հատկապես՝ էլիտար համարվող դպրոցներում, մի հատ կարող եք հարցումներ անել, թե, օրինակ, 2025 թվականին ձեր դպրոցից քանի տղա է ավարտել դպրոցը, քանիսն է գնացել բանակ: Սխեման հետեւյալն է՝ ովքեր փող ունեն, մինչեւ 18 տարին լրանալը հրաժարվում են քաղաքացիությունից: Այդ փողը Հայաստանում չեն ծախսում, դրսում են ծախսում՝ Եվրոպայում՝ շատ, Ռուսաստանում՝ ավելի քիչ: Գումար է դուրս գալիս Հայաստանից դրա արդյունքում, այդ տղերքն են դուրս գալիս մեր պահեստազորից, հաշվառումից ընդհանրապես, ու մենք կորցնում ենք եւ իրենց, եւ իրենց գումարները: Ես առաջարկել եմ՝ այս սխեման փակենք ու շուռ տանք, որ այդ գումարները ոչ թե հոսեն Հայաստանից դուրս, այլ գան հոսեն ծառայող տղաների գրպանները»:

ՔՊ մեծամասնությունն այս անգամ էլ մերժեց նրա նախագիծը: Մեր տեղեկություններով, հանձնաժողովում տեղի ունեցած քննարկումից հետո իշխանականներն այնքան են նյարդայնացել իրենց կուսակցի պահվածքից, որ քննարկել են հարցը՝ դիմել Փաշինյանին, նրան առաջարկել՝ ձգել Հայկ Սարգսյանի կապերը:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՄԻՔԱՅԵԼՆ ԱՄԲՈՂՋ ՕՐԸ ԾՆԿԻ ԻՋԱԾ՝ ԱՂՈԹՈՒՄ Է ԵՂԲՈՐ ՀԱՄԱՐ

Մարտի 29-ին, Երեւանի Սուրբ Աննա եկեղեցու միջադեպի արդյունքում, 3 անձ էր ձերբակալվել: Նախաձեռնվել էր քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով (խուլիգանություն) եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը): Ըստ էության, իրավապահները սրանով խոստովանել են, որ Նիկոլ Փաշինյանը Սուրբ Աննա եկեղեցի էր եկել քաղաքական գործունեությամբ զբաղվելու, այլ ոչ թե որպես շարքային քրիստոնյա՝ պատարագի մասնակցելու:

Ձերբակալվածներից երկուսը երկվորյակ եղբայրներ են՝ 18-ամյա Դավիթ եւ Միքայել Մինասյանները, թիվ 29 դպրոցի 12-րդ դասարանի աշակերտներ՝ գերազանց սովորող, առողջական խնդիրներ ունեցող: Երրորդ ձերբակալվածն ազատամարտիկ, հանրային գործիչ Գեւորգ Գեւորգյանն է: 18-ամյա Դավիթ Մինասյանին մեղադրանք է առաջադրվել «խուլիգանության եւ պաշտոնատար անձի քաղաքական գործունեությանը խոչընդոտելու նպատակով նրա նկատմամբ բռնություն գործադրելու», եղբորը՝ Միքայելին, նրան աջակցելու, իսկ Գեւորգ Գեւորգյանին՝ այս ամենը կազմակերպելու համար: Մեղադրանքը հաստատվելու դեպքում նրանց սպառնում է 2-5 տարվա ազատազրկում: Եռօրյա ձերբակալությունից հետո Միքայել Մինասյանին ՔԿ-ն բաց թողեց՝ խափանման միջոց ընտրելով երկրից չբացակայելու մասին ստորագրությունը եւ կիրառելով գրավ՝ 5 միլիոն դրամի չափով: Գեւորգ Գեւորգյանը նույնպես ազատ արձակվեց՝ 5 միլիոն դրամ գրավի դիմաց: Իսկ Դավիթ Մինասյանին դատավոր Մնացական Մարտիրոսյանը 2 ամսով կալանավորեց:

Դատարանից բանտ գնալու ճանապարհին Դավիթը կորցրել է գիտակցությունը, տեղափոխվել հիվանդանոց: Փաստաբանները հայտնել էին, որ տղան կալանքի հետ անհամատեղելի հիվանդություն ունի՝ չբացահայտված ալերգիա: Տղայի մայրը՝ Գայանե Մինասյանը, դատական նիստից առաջ բաց նամակով դիմել էր դատարանին, խնդրել՝ որդուն հնարավորություն տալ դատական նիստերին սպասել ազատության մեջ, եւ շեշտել, որ որդին 4 տարեկանից ունի շուրջօրյա հատուկ խնամքի կարիք: Բայց ո՛չ դատարանը, ո՛չ դատախազությունը, ո՛չ Քննչական կոմիտեն եւ ո՛չ էլ վարչապետ Փաշինյանը այդ նամակին եւ հանրության պահանջին ուշադրություն չդարձրին: Հիվանդանոցից Դավիթին տեղափոխել էին «Արմավիր» ՔԿՀ, որի դիմաց էլ նա ուշագնաց էր եղել, հետո տեղափոխել էին «Աբովյան» ՔԿՀ՝ անչափահասների կալանավայր, իբրեւ թե որպեսզի պատանին հնարավորություն ունենա ուսումը շարունակելու: Այնտեղ էլ Դավիթի վիճակը վատացել էր, ստիպված էին եղել տեղափոխել «Նաիրի» ԲԿ-ի վերակենդանացման բաժին, եւ ահա, երեկ որոշում է կայացվել նրան տեղափոխել հիվանդասենյակ:

Պատանու պաշտպան **Լուսինե Մարտիրոսյանը** «Հրապարակ»-ի հետ զրույցում ասաց, որ տղան շարունակում է գտնվել վատ վիճակում, հետազոտությունները շարունակվում են: Ֆեյսբուքում 4 հազարից ավելի օգտատեր միացել է Դավիթի ազատման վերաբերյալ ստորագրահավաքին, մայրն է դիմել ԿԳՄՍ նախարարին, դիմել են դատախազություն, ի՞նչ արդյունք կա այդ դիմումներից՝ հետաքրքրվեցինք մենք: Փաստաբանը պատասխանեց. «4 հազար ստորագրության վերաբերյալ մենք անգամ չենք էլ իմացել, իմացել ենք ֆեյսբուքյան օգտատեր Աննա Հովհաննիսյանի ֆեյսբուքյան էջից: Մենք դատախազին ենք դիմել, մայրն է դիմել, երեխաները, ծնողներն են դիմել՝ ոչինչ չկա, նստած սպասում ենք»: Ըստ փաստաբանի, մյուս եղբայրը՝ Միքայելը, շատ ծանր վիճակում է՝ թե՛ հոգեբանորեն, թե՛ առողջական առումով. «Միքայելին էլ մենք ենք առանձին հետազոտությունների տանում, բայց քանի որ Դավիթի վիճակն այնքան ծանր է, Միքայելին անտեսում ենք, լուռ անում ենք տան պայմաններում հետազոտություն եւ բուժում, բայց հոգեբանորեն սարսափելի վիճակում է, ամբողջ օրը ծնկի իջած՝ աղոթում է եղբոր համար»: Հետաքրքրվեցինք՝ իսկ սույն վարույթի շրջանակներում որեւէ քննչական գործողություն իրականացվե՞լ է, ի վերջո՝ ի՞նչ քննություն է գնում այս հորինված մեղադրանքով: Փաստաբանն ասաց, որ երեխաների հետ կապված որեւէ քննչական գործողություն չի իրականացվել:

Գեւորգ Գեւորգյանի պաշտպան **Հարություն Բաղդասարյանն** էլ նշեց՝ վերջին օրերին իր պաշտպանյալի հետ կապված քննչական գործողություն չի արվել, մեկ անգամ՝ դեպքից հետո, խուզարկել են Գեւորգյանի տունը եւ առգրավել նրա ու կնոջ հեռախոսները:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՄՈՍԿՎԱ



Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻՆ ՎԱՏ ՕՐԵՐ ԵՆ ՍՊԱՍՎՈՒՄ

Մոսկվան ու Երեւանն այս օրերին ակտիվորեն քննարկում են Պուտին-Փաշինյան ոչ ստանդարտ շփումը: Կիրակի Պուտինի խոսնակ Դմիտրի Պեսկովը, «Ռոսիա» հեռուստաալիքի «Պուտին-Կրեմլ-Մոսկվա» հաղորդման ժամանակ կարծես դիմելով Հայաստանի ժողովրդին, ասաց. «Դուք ունեք ինտեգրացիա՝ ԵԱՏՄ-ի տեսքով, եւ դուք այնտեղ փողեր եք աշխատում ու ոչ փոքր փողեր: Եվ ձեր անդամությունը ԵԱՏՄ-ին հնարավորություն է տալիս ձեզ՝ զարգանալ արագընթաց տեմպերով: Դրանք շատ ավելի բարձր են ԱՊՀ միջին ցուցանիշից եւ, իհարկե, անհամեմատ բարձր, քան մեզ մոտ՝ Ռուսաստանում: Եվ մենք ասում ենք, որ որոշակի փուլում, եթե դուք շարունակեք գնալ Եվրամիության հետ, ապա մեր երկու համակարգերը չեն համադրվում, դրանք տարբեր օպերացիոն համակարգեր են: Եվ ինչ-որ պահի դուք պետք է ընտրություն կատարեք: Բայց հայկական կողմը համարում է, որ ներկայիս պահին ԵԱՏՄ-ին ոչինչ չի խանգարում, ոչինչ չի սպառնում, իսկ եթե նման իրավիճակ առաջանա, նրանք կդիտարկեն այն, կողմն ու դեմը կհաշվեն: Սա եւս սուվերեն դիրքորոշում է, բայց շատ կարեւոր է, որ Երեւանում սա հասկանում են»: Անհամեմատ ավելի կտրուկ է արտահայտվում ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը: Առաջին ալիքի եթերում նա զգուշացնում է, որ եթե Հայաստանն անդամակցի ԵՄ-ին, կդադարեցվի ավիահաղորդակցությունը ՀՀ-ի եւ ՌԴ-ի միջեւ. «Եվրոպական Միության երկրների հետ հիմա ավիահաղորդակցություն չկա: Սա նշանակում է, որ Հայաստանի հետ ավիահաղորդակցություն չենք ունենա»:

Ռուս պաշտոնյաների նմանատիպ հայտարարությունների հանդեպ հատկապես զգայուն է միջին բիզնեսը՝ Հայաստանում եւ Ռուսաստանում: Խոշորն էլի մի բան կգտնի, բայց միջին բիզնեսին վատ օրեր են սպասվում: Ապրիլի 3-ին Մոսկվայում տեղի ունեցած ԱՊՀ երկրների միջազգային տնտեսական ֆորումի ժամանակ, որը նվիրված էր ԱՊՀ 35-ամյակին, Հայաստանից որեւէ ներկայացուցիչ չի եղել, ինչը նշանակում է, որ Հայաստանը պասիվանում է նաեւ ԱՊՀ հարթակներում: Այս մասին մեզ հայտնեց ֆորումին մասնակցած մեր հայրենակիցը՝ Ռուսաստանում բնակվող քաղաքագետ **Մարիամ Հովսեփյանը**: Հայաստանի մասնակցությունը Եվրասիական տնտեսական միությանը նրա գիտական թեզի թեման է եղել: Նա ասում է, որ Պուտին-Փաշինյան հանդիպման ժամանակ ՌԴ նախագահի հնչեցրած նախազգուշացումը, թե Հայաստանը չի կարող լինել ԵԱՏՄ-ում ու մյուս կողմից լիարժեք անդամ լինել ԵՄ-ում, մեր հարաբերություններում նոր ու վտանգավոր իրավիճակ է ստեղծել:

«Նախկինում հակառակն էր՝ առավելություն էր համարվում այն, որ Հայաստանը լիարժեք անդամակցում էր ԵԱՏՄ-ին, եւ Հայաստանի միջոցով իրենք հնարավորություն ունեին հարաբերվել նաեւ մյուս կառույցների հետ եւ առաջին հերթին ԵՄ-ի, ինչպես նաեւ՝ Իրանի վրա դուրս գալ: Սա Հայաստանի յուրահատկությունն էր, որն արժեւորում էր մեր անդամակցությունը ԵԱՏՄ-ին: Պուտինը նշում է ֆիտոսանիտարական հսկողության մասին, որը ԵՄ-ում եւ ԵԱՏՄ-ում տարբեր է, հետո գնաց նախազգուշացումը գազի մասին, ինչից ենթադրվում է, որ գազը եւս կթանկանա: Մի խոսքով, այն ամենի շուրջ, ինչի մասին մենք քաղաքագետներով միշտ մտահոգված խոսում էինք, նկատի ունենալով, թե ինչքան հայեր կան ՌԴ-ում, տեսախցիկների առաջ խոսեց նաեւ ՌԴ նախագահը: Մենք շատ արագ հասանք այն կետին, որից ես ու ինձնմանները շատ վախենում էինք: Եթե գնա հարաբերությունների վատթարացում, դա առաջին հերթին անդրադառնալու է Հայաստան-Ռուսաստան առեւտրի, տրանսպորտի, մի շարք այլ ոլորտների վրա, ինչը միանշանակ կհարվածի ՀՀ քաղաքացու ապրելակերպին»,- ասում է Մարիամ Հովսեփյանը:

Պուտինը փորձեց նաեւ Արցախի թեմայով շահարկումներին վերջ դնել: «Եթե մինչ այդ Հայաստանի բնակչությունը կերակրվում էր այն տեղեկություններով, թե ռուսները չօգնեցին, ռուսները չարեցին, այս պահին նախագահի մակարդակով խոսվեց այն մասին, որ իրենք չէին կարող անել ոչինչ, եթե Հայաստանի վարչապետը Պրահայում ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Կարծում եմ, սրանով այս հարցը կարելի է փակված համարել Հայաստանի ու Ռուսաստանի հարաբերություններում»,- նշեց Մարիամ Հովսեփյանը: Նա հաջորդ օրը լսելով Օվերչուկի հարցազրույցը՝ հասկացել է, որ նրանք, ովքեր նախկինում ասում էին, որ քաղաքականությամբ չեն զբաղվում, «մերը բիզնեսն է», այժմ իրենց կաշվի վրա են զգալու քաղաքական դաշտում փոփոխությունները: «Ես հաճախ եմ լինում Հայաստանում, տեսնում եմ գյուղացիների ու գյուղատնտեսությամբ զբաղվող մարդկանց համակրանքը Փաշինյանի հանդեպ: Հետաքրքիր է, երբ իրենք իրենց գրպանի վրա զգան տարբերությունը, արդյոք համակիր կմնա՞ն Փաշինյանին»:

Մոսկվայում Հայաստանի դեսպանատան մոտ տեղի ունեցած ցույցերին Մարիամը չի մասնակցել, բայց նկատել է, որ դրանք սիստեմատիկ են: «Չեմ հիշում, որ նախկինում այսքան հեշտ արտոնեին ցանկացած թեմայի շուրջ ցույցեր կազմակերպելը: Եթե մարդիկ հեշտությամբ թույլտվություն են ստանում՝ հաճախակի ցույցեր անելու, ունեն լուսաբանում ռուսական առաջին ալիքի եւ մի շարք ֆեդերալ ՁԼՄ-ների մակարդակով, ապա սա նույնպես Ռուսաստանի դիրքորոշումը բացահայտող մի բան է»:

Հ1-Ը ՍԽԱԼՎՈՒՄ Է՝ ԱՌԱՋ ՎԱՏ ԷՐ, ՀԻՄԱ ՇԱՏ ԱՎԵԼԻ ՎԱՏ Է

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հշխանությունների քարոզչությամբ զբաղվող Հանրային հեռուստաընկերությունն օրերս մի ռեպորտաժ էր պատրաստել, որտեղ խոսվում էր այն մասին, թե նախկին իշխանությունների օրոք ինչքան ծանր պայմաններում են աշխատել լրագրողներն ու լրատվամիջոցները, քանի-քանի անգամ են դաժան ծեծի եւ բռնության ենթարկվել եւ այլն: Փորձել էին հիմնավորել Նիկոլ Փաշինյանի խոսքերը, որ եթե ինքը չլինի, 4 ժամ էլ չենք աշխատի, որ գործազուրկ կդառնանք ու ֆայլաբազարում կկանգնենք: Ռեպորտաժում, որպես օրինակ, նշված են քաղաքագետ, նախկին լրագրող Արմեն Բաղդասարյանին, «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանին ծեծի ենթարկելու դեպքերը: Բայց, որքան էլ զարմանալի է, ռեպորտաժում ո՛չ Արմեն Բաղդասարյանի կարծիքն է հնչում, ո՛չ էլ Արամ Աբրահամյանի: Նրանց փոխարեն խոսում են Փաշինյանի թիմակից, «Հայկական ժամանակ» օրաթերթի երկարամյա լրագրող Հայկ Գեւորգյանը եւ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանը, որն իշխանական քարոզչությամբ է զբաղվում:

Եվ ոչ մի խոսք այն մասին, որ 2018-ից ի վեր լրագրողների եւ խմբագիրների դեմ ոչ պակաս ճնշումներ են գործադրվել՝ աննախադեպ դատական հայցեր, ընդդիմադիր լրատվամիջոցների խմբագրություններ ներխուժել եւ համակարգիչներ առգրավել, լրագրողների ու խմբագիրների թիրախավորում, խոսքի համար կալանավորվածներ, հավատարմագրումից զրկվածներ, բռնության դեպքեր էլ են եղել, օրինակ՝ լրագրող Անի Գեւորգյանին քաշքշելու կադրերը:

Արմեն Բաղդասարյանին հարցրինք՝ առա՞ջ էր ավելի դժվար ազատ խոսք արտահայտելը, թե՞ հիմա: Նա ասաց. «Հայաստանում խոսքի ազատությունը միշտ է եղել բարձր մակարդակի՝ առաջ էլ, հիմա էլ: Այլ հարց է, թե իշխանություններն ինչ մեթոդներով են փորձում ճնշել խոսքի ազատությունը: Բոլոր իշխանություններն էլ, այո, փորձել են ճնշել խոսքի ազատությունը, բայց հիմա շատ ավելի վատ է վիճակը, դիմում են ավելի կրեատիվ եւ ինստիտուցիոնալ մեթոդների եւ հենց այդ եղանակներով են փորձում լռեցնել ազատ խոսքը: Օրվա իշխանությունները զարգացրել են խոսքի ազատության ճնշման ձեւերը: Ինչ վերաբերում է նախկին արատավոր բարքերին, որ ինձ ծեծի էին ենթարկել եւ այլն, դա նորություն չէ, սակայն խնդիրն այն է, որ հիմա իրավիճակն ավելի վատ է: Այն, որ Հ1-ն իմ մասին ռեպորտաժ է պատրաստում եւ իմ կարծիքը չի ցանկանում լսել, դա ինձ համար նորմալ է, քանի որ եթե ինձ հարց ուղղեին, ես էլ հարցին հարցով էի պատասխանելու, թե ինչու Նիկոլ Փաշինյանին չեն հարցնում այն մասին, թե ինքը, որպես լրագրող, որքան հարձակումների է ենթարկվել, սակայն այսօր, երբ ինքը վարչապետ է, իր հերթին փորձում է լռեցնել ազատ խոսքը: Այդ ռեպորտաժի եւ իշխանությունների նպատակը խոսքի ազատությունը չէ, իրենց նպատակն ու մտահոգությունն այն է, որ ցույց տան հետեւյալը՝ առաջ վատ էր, հիմա լավ է: Եթե նրանց մտահոգությունն իսկապես լիներ խոսքի ազատությունը, ապա Հայաստանում այս վիճակը չէր լինի, հակառակը՝ կփորձեին հասկանալ, թե ինչու ենք հանգել այս կետին: Նիկոլ Փաշինյանին թվում է, թե ամեն ինչի հիմքում ինքն է, անգամ՝ Հայաստանի պետականության: Նախընտրական իրավիճակ է, նրա խնդիրը լավը երեւալն է: Նիկոլ Փաշինյանը վերարտադրվելուց բացի այլ նպատակ այս փուլում չունի: Առաջ էլ վատ էր իրավիճակը, բայց առաջ վատ էր, հիմա շատ ավելի վատ է: Այն ժամանակ, երբ լրագրողների նկատմամբ հարձակումներ էին իրականացվում, ամբողջ աշխարհում աղմուկ էր բարձրանում: Իմ դեպքը՝ վառ օրինակ: Ինձ անդրադարձել էր միջազգային մամուլը՝ BBC-ից սկսած, տարբեր ամերիկյան լրատվամիջոցներով վերջացրած: Այժմ նման բան չկա: Ասում են՝ իշխանությունը լավ է անում, քանի որ հիբրիդային պատերազմ է տեղի ունենում եւ այլն: Խոսքի ազատության համար պայքարող ՀԿ-ները եւ քաղհասարակությունն առհասարակ քարի պես լուռ են, իշխանությունները կարողացել են ստեղծել մի իրավիճակ, երբ կարողանում են թե՛ լռեցնել ազատ խոսքը, թե՛ այն ներկայացնել որպես Հայաստանի ինքնիշխանությանն ուղղված քայլ: Նրանք իրավիճակը կեղծում են ինստիտուցիոնալ»:

Արամ Աբրահամյանն էլ, խոսելով թեմայի մասին, ասաց. «Իմ դեմ ուղղված այդ դեպքը տեղի է ունեցել 1994 թվականի հոկտեմբերի 19-ին: 32 տարի է անցել այդ դեպքից: Այդ ժամանակ նախագահը Լեւոն Տեր-Պետրոսյանն էր, դեպքն այդպես էլ այն ժամանակ չբացահայտվեց: Ինչ վերաբերում է նրան, որ առաջ վատ էր, հիմա լավ է, ապա դա այդպես չէ: Չէի ասի, թե առաջ դրախտ էր, իսկապես՝ լինում էին բռնություններ՝ լրագրողների դեմ, սակայն չեմ կարող ասել, որ հիմա ավելի լավ է: Ստալինի ժամանակ էլ մարդկանց գուլագ էին ուղարկում՝ դե, եկեք այս տրամաբանությամբ այսօր շնորհակալ լինենք, որ մեզ էլ գուլագ չեն ուղարկում: Ես այդ համեմատությունները լավ չեմ հասկանում: Ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ մարդկանց ձեռքերը ոլորած՝ ԱԱԾ-ականները դիմակով բռնության են ենթարկում՝ ինչ-որ մի բառի համար, կամ ինչ-որ մի լայքի համար այսօր մարդկանց են աշխատանքից ազատում կամ ցանկացած մեկի դեմ հայտնի ՊՈԱԿ-ի միջոցով կարող են բուլինգի կոմպանիա ստեղծել: Ասել, որ հիմա ավելի լավ պայմաններ են, չեմ կարող, առաջ էլ էր վատ, բայց հիմա էլ է վատ: ԱԺ-ում կան մի շարք նախկին լրագրողներ, ինչպես նաեւ վարչապետը եւս նախկին լրագրող է, ես ակնկալում էի, որ իրավիճակը կփոխվի դեպի լավը, բայց այդպես չեղավ: Առաջ շմայսներն ու թոխմախներն էին հարձակվում լրագրողների վրա, հիմա էլ ՔՊ-ի օլիգարխներն են նույն կոպտությամբ հարձակվում այն լրագրողների վրա, ովքեր անհարմար հարցեր են հնչեցնում»:

ԻՍԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԶՈ՞ՒՄ Է, ՈՐ ԱԴՐԲԵՋԱՆԸ ԴԱՌՆԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐ

Նիկոլ Փաշինյանը մի քանի օր առաջ հայտարարեց, որ Կիպրոսի անվտանգության երաշխավորը Թուրքիան է, իսկ Ուկրաինայի անվտանգության երաշխավորը՝ Ռուսաստանը: Նիկոլ Փաշինյանի միտքն ավելի բացեց Ալեն Սիմոնյանը՝ ապրիլի 4-ին տեղի ունեցած ՔՊ համաժողովում բացահայտելով ՔՊ-ի խաղաղության հայեցակարգը, ըստ որի՝ Հայաստանի անվտանգության երաշխավորն Ադրբեջանն է: Ի՞նչ է սա նշանակում, ինչպե՞ս է Ադրբեջանը երաշխավորելու Հայաստանի անվտանգությունը եւ ինչի՞ դիմաց:

Մինչեւ Փաշինյանի՝ իշխանության գալը Հայաստանի անվտանգության երաշխավորը Հայաստանի զինված ուժերն էին ու նաեւ դաշնակիցները՝ դեմս Ռուսաստանի, որի հետ Հայաստանն ուներ եւ ունի ռազմաքաղաքական դաշինքի մասին համաձայնագիր, եւ ՀԱՊԿ-ը: Սա նշանակում էր, որ արտաքին ագրեսիայի դեպքում Հայաստանի զինված ուժերն իրենց վրա են վերցնում Հայաստանի եւ այն ժամանակ՝ նաեւ Արցախի տարածքի պաշտպանությունը, իսկ անհրաժեշտության դեպքում դիմում են դաշնակցին կամ դաշնակիցներին՝ ռազմական աջակցություն տրամադրելու համար: Սառեցնելով անդամակցությունը ՀԱՊԿ-ին եւ Հայաստանում Ռուսաստանի ռազմական ներկայությունը՝102-րդ ռազմաբազան հռչակելով որպես Հայաստանի անվտանգությանը սպառնացող գործոն, Փաշինյանը փոխում է Հայաստանի անվտանգության կոնցեպցիան:

Ի՞նչ է իրենից ներկայացնում նոր կոնցեպցիան, ըստ որի՝ Հայաստանն իր անվտանգության երաշխավոր ճանաչում է Ադրբեջանին: Փաստացի, Հայաստանն ընդունում է, որ ինքը պարտվել է Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմում, ընդունելով իր պարտությունը՝ Հայաստանը համաձայնում է կատարել հաղթող երկրի կողմից իրեն ներկայացվող բոլոր պահանջները: Ադրբեջանը դառնում է Հայաստանի փաստացի տերը՝ կարող է որոշել թե՛ Հայաստանի ներքին, թե՛ արտաքին քաղաքականությունը, նշանակել եւ ազատել Հայաստանի կառավարիչներին՝ նրանց օժտելով տեղական ինքնավարությամբ, ինչպես, օրինակ, հարկերի հավաքումն է, եւ դրանք ծախսելու հարցում որոշումներ կայացնելու իրավունքը: Փողը կամ դրա հիմնական մասը մնալու է տեղական իշխանության տնօրինության տակ: Այս դեպքում Ադրբեջանն է որոշում, թե ով պետք է լինի Հայաստանում իշխանություն, որ քաղաքական ուժը եւ որ քաղաքական գործիչը:

Որպեսզի սա լավ հասկացվի, բերենք ընդամենը մի երկու օրինակ. 1953 թվականին ԱՄՆ հատուկ ծառայությունները պետական հեղաշրջում իրականացրին Իրանում, իշխանությունից հեռացնելով վարչապետ Մոհամադ Մոսադեղի կառավարությունը, միայն այն բանի համար, որ նա համարձակվել էր ազգայնացնել երկրի նավթարդյունաբերությունը, իսկ 1956 թվականին խորհրդային բանակը դաժանորեն ճնշեց հունգարական հեղափոխությունը, այնտեղ վերահաստատելով իրեն հնազանդ կառավարություն՝ վարչապետ նշանակելով Յանոշ Կադարին: Հունգարիայի անվտանգության երաշխավորը Խորհրդային Միությունն էր, բայց անվտանգության երաշխավոր ասելով, պետք չէ հասկանալ միայն արտաքին անվտանգությունը: Դա ներառում է նաեւ ռեժիմի անվտանգությունը, քանի որ այդ ռեժիմն է ապահովում երկրի լոյալությունը երաշխավորի նկատմամբ:

Ի՞նչ ունենք Հայաստանի դեպքում. Ալիեւը համաձայնել է ստանձնել Հայաստանի երաշխավորի դերը՝ ապահովել Հայաստանի արտաքին անվտանգությունը, չհարձակվել Հայաստանի վրա, եւ ռեժիմի անվտանգությունը՝ ապահովել Փաշինյանի իշխանությունը Հայաստանում: Սրա դիմաց Փաշինյանը պարտավորվել է կատարել Ալիեւի բոլոր հրահանգները, անկախ նրանից՝ կվերաբերվեն դրանք արտաքին, թե ներքաղաքական կյանքին: Արտաքին քաղաքականության հարցում դա հարաբերությունների խզումն է Ռուսաստանի հետ, իսկ ներքաղաքական կյանքում՝ փաստացի հրաժարումն անկախությունից՝ Անկախության հռչակագրի դուրսմղումը Սահմանադրությունից: Դրանից հետո Ադրբեջանը հնարավորություն կստանա ներկայացնել այլ՝ ավելի կոնկրետ պահանջներ՝ ինչպես տարածքային, այնպես էլ ներքին կյանքի կազմակերպման հարցերում: Փոխարենը Ալիեւը կերաշխավորի Փաշինյանի իշխանությունը՝ հայ հասարակության կողմից նրա իշխանության վիճարկման դեպքում կարող է ռազմական օժանդակություն տրամադրել, զորք կամ հատուկ նշանակության ուժերի միջոցով հատուկ գործողություն կազմակերպել՝ ապահովելով ռեժիմի անվտանգությունն ապագայում: Չնայած Փաշինյանը համաձայնել է ընդունել Ադրբեջանի երաշխավորությունը, բայց գործարքի կայացմանը խանգարում է երկու հանգամանք՝ հայ հասարակության դիմադրությունը եւ Ռուսաստանի ռազմական ներկայությունը Հայաստանում, որովհետեւ Ադրբեջանը չի կարող Հայաստան զորք մտցնել եւ աջակցել Փաշինյանին՝ պահելու իր իշխանությունը, եթե Հայաստանի տարածքում առկա են երրորդ երկրի զինված ուժեր, որը կարող է ռազմական կոնֆլիկտ հրահրել Ադրբեջանի եւ Ռուսաստանի միջեւ, ինչն Ալիեւին պետք չէ եւ չի մտնում անվտանգության երաշխավորության ստանձնման պայմանների մեջ: Փաշինյանը մտադիր է այս երկու խնդիրները լուծել միաժամանակ՝ 2026 թվականի ընտրությունների ժամանակ վերջնականապես կոտրել հայ հասարակության դիմադրությունը, իսկ դրանից հետո Ռուսաստանից պահանջել, որ ամբողջությամբ դուրս գա Հայաստանից, այդ թվում՝ ռազմաբազան հանի Հայաստանի տարածքից եւ Հայաստանն ամբողջությամբ հանձնի Ադրբեջանի երաշխավորությանը: Չի բացառվում, որ, որպես անվտանգության հավելյալ երաշխիք, Ադրբեջանը զորք մտցնի Հայաստան, որ Հայաստանի անվտանգությունն ավելի «երաշխավորված» լինի:

2026-ի ընտրությունները, մեծ հաշվով, դրա մասին են. ուզո՞ւմ է հայ հասարակությունը, որ Ադրբեջանը դառնա Հայաստանի անվտանգության երաշխավոր՝ նշված պայմաններով, թե՞ մերժում է:

Նիկոլ Փաշինյանը սկսեց, Ալեն Սիմոնյանը շարունակեց:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՆՆՈՐՄԱԼ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

Այս կիրակի ԵՄ անդամ Հունգարիայում խորհրդարանական ընտրություններ են: Հունգարիայի բազմամյա վարչապետ Վիկտոր Օրբանը վերածվել է ԵՄ թշնամու: Բրյուսելում չեն կասկածում, որ Օրբանը կպահպանի պաշտոնը: Որպեսզի Օրբանը հետայսու չկարողանա արգելափակել իր որոշումները՝ ԵՄ-ն պատրաստվում է պատժամիջոցներ կիրառել այդ երկրի դեմ, եթե, իհարկե, չկարողանա չեղարկել ընտրությունների արդյունքները, ինչպես դա կատարվեց 2024-ին, Ռումինայում: Ամերիկյան Politico պարբերականի տվյալներով, ԵՄ-ում այդ առումով շրջանառվում է 4 տարբերակ: Առաջինը եւ հիմնականը քվեարկության կանոնների փոփոխությունն է: Երկրորդը ԵՄ բյուջեով Հունգարիային հատկացվելիք միլիարդների սառեցումն է: Երրորդը ԵՄ խորհրդում Հունգարիայի քվեարկության իրավունքի կասեցումն է: Չորրորդը Հունգարիան ընդհանրապես ԵՄ-ից վռնդելն է, ինչը կարող է շղթայական ռեակցիա առաջացնել:

Պատկերացնո՞ւմ եք, ԵՄ-ում պատրաստ են նույնիսկ գնալ այդ քայլին, որպեսզի ինքն այլեւս ոտնատակ չընկնի: Իսկ ինչո՞վ է Օրբանը վաստակել այդ թշնամությունը: Նախ, որովհետեւ փորձում է պահպանել պետության ինքնիշխանությունը: Այո, ԵՄ անդամ երկիրը փորձում է ինքնիշխանություն ապահովել: Ու դա հաղթահարելու նպատակով ցանկանում են կամ միջամտել ընտրություններին եւ կամ կյանքի կոչել Politico-ի միջոցով գաղտնազերծված չորս տարբերակներից որեւէ մեկը: Դժբախտաբար, Հունգարիան մեզանում հիշվում է Գուրգեն Մարգարյանի սպանությամբ, իսկ անձամբ Վիկտոր Օրբանը՝ մարդասպանի արտահանձնումով Ադրբեջանին, ինչպես նաեւ թյուրքախոս երկրների կազմակերպությունում իր դիտորդական կարգավիճակով:

Իսկ հակաեվրոպական դիրքորոշումը դրսեւորվում է իր երկրի քաղաքացիների բարեկեցության հաշվին Ուկրաինային 90 միլիարդ եվրոյի վարկ հատկացնելու դեմ պայքարով: Քանի որ ոչ մեկը հույս չունի, թե այդ վարկը կարող է վերադարձվել՝ գոնե տեսանելի ապագայում, ու իրենք էլ պետք է փակեն այն: Իսկ վարկ տալով էլ ընդամենը երկարաձգվելու է ռուս-ուկրաինական պատերազմը: Քանի որ նույնիսկ Ուկրաինայի նախագահ Զելենսկին արդեն չի հավատում իր երկրի հաղթանակին: Իսկ երկարաձգումն ընդամենը շարունակելու է խլել մարդկային կյանքեր եւ ավելացնել երկրի ավերումը: Բայց պատերազմի շնորհիվ նախագահ Զելենսկին շարունակում է պաշտոնավարել: Միաժամանակ վարչապետ Օրբանը փորձում է պաշտպանել իր երկիրն անօրինական միգրանտների հոսքից՝ դեմ գնալով նաեւ ԵՄ-ով թույլատրված՝ միգրանտների քվոտավորված ներթափանցումը:

Վիկտոր Օրբանը եւ վերջերս նաեւ՝ Սլովակիայի վարչապետ Ռոբերտ Ֆիցոն մեղադրում են Ուկրաինայի իշխանություններին Հունգարիային եւ Սլովակիային մատակարարվող եւ այդ երկրի տարածքով անցնող ռուսական «Դրուժբա» խողովակաշարով նավթի մատակարարումները դիտավորյալ դադարեցնելու մեջ: Ուկրաինայի իշխանություններն արդարանում են, թե դրա ենթակառուցվածքները լրջորեն վնասվել են ռուսական անօդաչու սարքերի հարվածների հետեւանքով: Որպես պատասխան՝ Հունգարիան եւ Սլովակիան դադարեցրել են դիզելային վառելիքի եւ էլեկտրաէներգիայի արտակարգ մատակարարումներն Ուկրաինային: Այս հարցում եւս այդ երկիրը՝ Սլովակիայով հանդերձ, ձգտում է ինքնիշխանության:

Հունգարիայից անցնենք հյուսիս եւ գանք Լեհաստան: 7 տարի առաջ, ըստ սոցհարցումների, ԵՄ-ից դուրս գալու կողմնակիցները Լեհաստանում կազմում էին 6-7%: 2026-ին դրան կողմ է արդեն հարցվածների 22-25%-ը: Այդ ցուցանիշը շատ ավելի բարձր է 18-29 տարեկանների շրջանում՝ 35,5%: Հարց է առաջանում, թե ժամանակին ԵՄ ձգտող լեհերն ինչու են ցանկանում դուրս գալ եվրոպական դրախտից: Պատասխան՝ լեհերը բացարձակ դեմ են ԵՄ-ի միգրացիոն քաղաքականությանը, որովհետեւ չեն ցանկանում փախստականներ ընդունել, իսկ դա պարտադիր պայման է ԵՄ-ի կազմում գտնվող երկրների համար: Առանձին այդ երեւույթն ավելի լուրջ խնդրի՝ պետության ինքնիշխանության մաս է կազմում: 2021 թ. հոկտեմբերի 7-ին Լեհաստանի Սահմանադրական դատարանը որոշում է ընդունել, ըստ որի՝ ԵՄ պայմանագրերի եւ ԵՄ դատարանների որոշումների որոշակի դրույթներ հակասում են Լեհաստանի սահմանադրությանը: Որոշմամբ հայտարարվել է, որ ԵՄ ինստիտուտները գործում են իրենց իրավասությունից դուրս՝ փաստացի մերժելով իրավունքի գերակայության եվրոպական սկզբունքը:

Իսկ Հայաստանում, եթե հավատանք վերջին սոցհարցումներին, բնակչության կեսից ավելին ձգտում է միանալ Եվրամիությանը: Եվ դա ներկայացվում է ոչ միայն բարեկեցության, այլեւ ինքնիշխանության աճի պրիզմայով: Փաստորեն ստացվում է, որ որոշ չափով մեր երկրի մակարդակին մոտ, թեեւ շատ ավելի բարձր, երկրները հանուն ինքնիշխանության եւ ժողովրդի բարեկեցության պահպանման կռիվ են տալիս ընդդեմ ԵՄ-ի: Իսկ Փաշինյանի իշխանությունը ցանկանում է դրանք ձեռք բերել կամ ավելացնել ԵՄ-ին միանալու շնորհիվ: Այստեղ է երեւում, թե ինչ մակարդակի կեղծիք է շրջանառում կառավարությունը: Ստացվում է նաեւ, որ Ռուսաստանի դեմ ինքնիշխանության անվան տակ մղվող սառը պատերազմն իրականում հեքիաթ է: Որովհետեւ աննորմալ բան է սեփական անվտանգությունն ապահովող երկրի դեմ կռիվ տալ նրան թշնամի վերպետական կառույցի տակ պառկելու համար՝ անունը դնելով ինքնիշխանության հաստատում: Ի՞նչ է դա, եթե ոչ աննորմալ մտածողության հերթական դրսեւորում:



Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ԱՅՑ

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԵՏՔԵՐՈ՞Վ. ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Նիկոլ Փաշինյան-Վլադիմիր Պուտին ապրիլմեկյան հանդիպումը շարունակում է թեժ քննարկումների առարկա մնալ ոչ միայն հայաստանյան շրջանակներում, այլեւ՝ Ռուսաստանում, հատկապես՝ պրոկրեմլյան գործիչների շրջանում: Թե՛ Հայաստանում, թե՛ ՌԴ-ում ծավալվող դիսկուրսի հիմնական մեխն այն է, որ Պուտինը նախընտրական խանդավառությամբ եւ, ինչու չէ՝ քաղաքական «դաբրո» կամ «ըմբռնում» ստանալու ակնկալիքով Մոսկվա ժամանած Փաշինյանին իջեցրեց իրական հողի վրա, մատնանշեց Հայաստանի հետ հարաբերություններում Կրեմլի «կարմիր գծերը» եւ «քաղաքավարի ու դիվանագիտորեն» հասկացրեց, թե կոնկրետ ինչ է ակնկալում Ռուսաստանը դաշնակից Հայաստանից եւ Փաշինյանից՝ հատկապես: Նա հայ գործընկերոջը հիշեցրեց ՀՀ-ի համար ռուսական գազի գների եւ ԵՄ սակագների միջեւ եղած էական տարբերության մասին, ընդգծեց նաեւ՝ միաժամանակ ԵԱՏՄ-ում եւ ԵՄ-ում գտնվելն «անհնար է»:

ԼՂ հարցի վերաբերյալ էլ ՌԴ նախագահը շեշտեց, որ ՀԱՊԿ-ի կողմից «բացարձակապես սխալ» կլիներ միջամտել վիճելի տարածաշրջանի շուրջ գործընթացներին, քանի որ 2022 թվականին Երեւանը ճանաչել է Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս: Եվ մեկ կարեւոր նյուանս. Պուտինը հույս հայտնեց, որ ռուսամետ քաղաքական գործիչները, այդ թվում՝ նրանք, ովքեր ներկայում ձերբակալված են, չնայած ռուսական անձնագիր ունենալուն (Սամվել Կարապետյանի մասին է խոսքը՝ խմբ.), կկարողանան մասնակցել ՀՀ առաջիկա ընտրություններին: Փաշինյանը, չնայած այս կտրուկ գնահատականներին, Երեւան վերադառնալուց հետո ռուս գործընկերոջ հետ բանակցություններն արդյունավետ անվանեց, թեեւ այն ակնհայտորեն իր քաղաքական «նվաստացման» հերթական խայտառակ ակտերից էր: Էլ չասենք՝ ՀՀ իշխանության ներկայացուցիչների կողմից հետագրությամբ արված ջղաձիգ մեկնաբանությունները՝ ալենսիմոնյանական հուսահատ մեսիջներով, թե բա՝ «Պուտինի դաբրոն այլեւս չի անցնում Հայաստանում» կամ՝ կարող ենք դուրս գալ ՀԱՊԿ-ից եւ ԵԱՏՄ-ից: Ռուսաստանի նախագահը «նրբորեն եւ քաղաքավարի ձեւով» Փաշինյանին փոխանցել է, որ Մոսկվան մնում է Հայաստանի հիմնական առեւտրային գործընկերը, մեր տնտեսության միակ այլընտրանքը, HCH-ի հետ զրույցում ասել է Պետդումայի պատգամավոր, ԱՊՀ հարցերով հանձնաժողովի նախագահ Կոնստանտին Զատուլինը: Նրա կարծիքով, Փաշինյանի «բախտը բերել» է, որ իրեն հյուրընկալել է Պուտինը, այլ ոչ թե ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը, հակառակ դեպքում «դա կհիշեցներ Թրամփի եւ Զելենսկու հանդիպումը, որը բոլորի ուշադրությունը բորբոքեց»: Զատուլինը նաեւ նշել է Ռուսաստանի նախագահի վարչակազմի «հումորի զգացումը»՝ Պուտինի եւ Փաշինյանի հանդիպումը պլանավորելով «ստի օրը՝ ապրիլի 1-ին»:

Հիշեցնենք, որ 2025 թ. փետրվարին Թրամփի վարչակազմի եւ ուկրաինական պատվիրակության միջեւ բանակցությունների ժամանակ Զելենսկու, ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի եւ Թրամփի միջեւ տեսախցիկների առջեւ բանավոր վեճ է սկսվել: Արդյունքում, ուկրաինացիները վաղաժամ լքեցին Սպիտակ տունը՝ առանց Վաշինգտոնի հետ հազվագյուտ մետաղների վերաբերյալ պայմանագիր ստորագրելու, որը պետք է լիներ նրանց այցի արդյունքը: Միջադեպը լայնորեն քննարկվեց լրատվամիջոցներում, իսկ Զելենսկին հետագայում գրավոր ներողություն խնդրեց Թրամփից:

Կրեմլյան թղթակից եւ «Կոմերսանտի» սյունակագիր Անդրեյ Կոլեսնիկովը Կրեմլում Պուտին-Փաշինյան հանդիպման մասին իր սյունակում նշել է Պուտինի ձեւակերպումների «ակնառու նմանությունը» Փաշինյանի եւ Եվրամայդանից կարճ ժամանակ առաջ Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչի հետ զրույցների միջեւ. «Ուկրաինան մտադիր էր ասոցացման համաձայնագիր ստորագրել Եվրամիության հետ: Եվ այդ ժամանակ Վլադիմիր Պուտինը ձեւակերպեց իր դիրքորոշումն այս գաղափարի վերաբերյալ: Դե, Վիկտոր Յանուկովիչն ականջալուր եղավ, եւ մի՞թե դա այն պահը չէր, երբ նրան սկսեց տանել ժողովրդական զայրույթի ալիքը»: Պուտինի՝ Փաշինյանի հետ զրույցը Կոլեսնիկովն անվանել է «ուշագրավ»՝ ենթադրելով, որ այն կարող է լինել «վերջի սկիզբը մասնակիցներից մեկի համար»: Բայց ուշագրավ է նաեւ Մոսկվայի «վերջնագիրը». ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում հայտարարեց, որ Հայաստանը մոտենում է այն կետին, որից հետո Մոսկվան «պետք է վերակառուցի իր տնտեսական հարաբերությունները» հանրապետության հետ: Օվերչուկի խոսքով՝ Հայաստանին «արհեստավարժորեն գայթակղում» են ԱՄՆ-ի եւ ԵՄ երկրների հետ համագործակցությամբ, եւ «մինչ այժմ դա աշխատում է»: Սակայն հանրապետության իշխանությունների կողմից կայացվող «թվացյալ տպավորիչ» որոշումները կտրված են իրականությունից եւ երկարաժամկետ հեռանկարում «ակնհայտ նյութական վնաս կպատճառեն» երկրին:

Փաշինյանը պնդում է, որ ռուսական բիզնեսը Հայաստանում «սպառնալիքի տակ չէ», բայց փաստերը «հակառակի մասին են խոսում»՝ նշել է ռուս պաշտոնյան. «Հայաստանը, որոշելով դադարեցնել համագործակցությունը Ռուսաստանի հետ, բախվել է նոր, շատ լուրջ սպառնալիքների, որոնց նախկինում չէր բախվել»: Իր հերթին, Տարածաշրջանային խնդիրների ինստիտուտի հետազոտական տնօրեն Դմիտրի Ժուրավլյովը նշել է. «Ինչ վերաբերում է Փաշինյանի՝ ՀԱՊԿ-ի եւ այլնի վերաբերյալ բավականին կոշտ հայտարարություններին, կարծում եմ, սա բարձրացնում է խաղադրույքները. հիմա նա ասում է. «Դուք, ռուսներ, համոզեք ինձ, թե ինչու վիճակն իրականում այդքան էլ վատ չէ»: Մոսկվան պետք է մտածի, թե արդյո՞ք իրեն անհրաժեշտ է այս այցը, ոչ թե այն պատճառով որ ուզում է վիճել Հայաստանի հետ, այլ «կթու կովի» գաղափարը, որ ԱՊՀ երկրները պետք է անպայման ինչ-որ բան ստանան մեզնից, անարդյունավետ է»:

Ընդհանուր տպավորությունն այն է, որ իր վերարտադրման համար նպաստավոր պայմաններ փնտրող Փաշինյանի հերթական քաղաքական շոուն տապալվեց առնվազն Մոսկվայում, այն էլ՝ Պուտինի ուղերձներով ու շեշտադրումներով: Մյուս բեմադրությունը, ամենայն հավանականությամբ, կտեսնենք մայիսին, երբ Երեւանում կկայանան Եվրոպական քաղաքական համայնքի, ինչպես նաեւ ՀՀ-ԵՄ առաջին գագաթնաժողովները: Թե ինչ է սպասվում Հայաստանին եւ փաշինյանական իշխանախմբին Պուտինի «դատավճռից» հետո, եւ ով կհաղթի ԵՄ-ՌԴ աշխարհաքաղաքական դուելում, ժամանակի հարց է՝ երկու ամսվա հարց...

Արա ԱԼՈՅԱՆ

ԹՐԱՄՓԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՆԿՈՒՄ ԱՊՐԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարկանիշը վերջին շաբաթներին դարձյալ զգալի անկում է արձանագրել՝ մոտենալով նախագահության ներկայիս երկրորդ ժամկետի ամենացածր ցուցանիշին: Ամերիկացիները, ներառյալ նաեւ պահպանողական ընտրողները, որոնց վրա հիմնականում հենվում է Սպիտակ տան ներկայիս ղեկավարը, ավելի ու ավելի շատ են տագնապած այն բանից, որ Իրանում պատերազմը կարող է ձգձգվել եւ ավելի բարդացնել տնտեսական վիճակը Միացյալ Նահանգների ներսում:

YouGov-ի եւ The Economist-ի անցկացրած սոցիոլոգիական հարցումների համաձայն, Թրամփի ներկայիս վարկանիշը վերջին շաբաթներին նվազել է 4 տոկոսով՝ 39 տոկոսից հասնելով 35-ի: Reuters/Ipsos-ի համաձայն, Թրամփի վարկանիշը նվազել է 4 տոկոսով՝ 40-ից հասնելով 36 տոկոսի: Ընդ որում, այս դեպքում հարցվածների 60 տոկոսը հայտարարել է, որ հավանություն չի տալիս Իրանի դեմ ԱՄՆ ռազմական գործողությանը: Միայն 35 տոկոսն է կարծում, որ Իրանի դեմ հարվածները ճիշտ են: Ամերիկացիների 2/3-ը, ընդ որում, կարծում է, որ Թրամփը որքան հնարավոր է շուտ պետք է հասնի հրադադարի եւ իրանական ներկայիս հակամարտությունից դուրս բերի Միացյալ Նահանգները: Թրամփի կողմնակիցների 40 տոկոսը կարծում է, որ հակամարտությունը պետք է հնարավորինս շուտ դադարեցվի, նույնիսկ եթե Միացյալ Նահանգները չեն հասել իրենց նպատակներին: Հակապատերազմական տրամադրություններն ԱՄՆ-ում պատահական չեն: Առաջին անգամ՝ վերջին երեք տարում, մեկ գալոն բենզինի գինը հատեց 4 դոլարը: Գնաճը կազմեց ավելի քան 1 դոլար: CNN/SSRS-ի մարտյան սոցհարցումն էլ ցույց է տալիս, որ ամերիկացիների միայն 31 տոկոսն է համաձայն Թրամփի տնտեսական քաղաքականությանը, 27 տոկոսն է աջակցում ինֆլյացիայի հարցում Թրամփի իրականացրած գործողություններին: Մեկ տարի առաջ այդ ցուցանիշը կազմում էր 44 տոկոս: Այս ամենը նշանակում է, որ հանրապետականները եւս հիասթափվում են Թրամփի վարած տնտեսական քաղաքականությունից:

Առջեւում ԱՄՆ նախագահի միջանկյալ ընտրություններն են, իսկ 2028-ին նախագահական ընտրություններ են կայանալու: Հանրապետականներն արդեն այժմվանից նախապատրաստվում են դրանց: Հասկանալի է, որ այս սոցհարցումները նաեւ մտահոգում են նրանց: Ու հատկապես նրանք անհանգստացած են նախագահական ընտրությունների ելքով: Առայժմ դեռ քննարկվում է, թե այդ ընտրություններում ով է հանրապետականներին ներկայացնելու: Հիմնական թեկնածուներն ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսն ու պետքարտուղար Մարկո Ռուբիոն են: Վենսը, որպեսզի կարողանա լիովին իրեն ռեալիզացնել, գոնե մի փոքր պետք է դուրս գա Թրամփի ստվերից: Ռուբիոն կարծես թե ավելի ակտիվ է: Ու թեեւ այդ ակտիվության շնորհիվ է, որ նրա հեղինակությունը պահպանողականների շրջանում սկսել է բարձրանալ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԱՎՈՒՇ

ԽԱՌՆԱԿ ՎԻՃԱԿ ԵՎ ԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԵՐԴԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մարտի 2-ին որոշել է Անահիտ Ջուլհակյանին ազատել Բերդի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021թ. մարտի 1-ին կնքված աշխատանքային պայմանագիրը: Մարզպետը նույն օրը մեկ այլ Ջուլհակյանի՝ Շուշանիկ Ջուլհակյանին, նշանակել է Բերդի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրենի պարտականությունները կատարող՝ մինչեւ այդ պաշտոնում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

Անահիտ եւ Շուշանիկ Ջուլհակյանները հեռու ազգականներ են: Բերդ քաղաքից մեզ հայտնեցին, որ Շուշանիկը մասնագիտությամբ հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի է, սակայն մինչեւ դպրոցի տնօրենի պարտականություններ կատարող նշանակվելը, 2023-ից Բերդի թիվ 1 դպրոցում աշխատել է որպես մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ: Նա դպրոցի տնօրենի թափուր տեղի համար մրցույթին մասնակցելու արտոնագիր չունի: Թեեւ մարզպետի որոշումներից անցել է ավելի քան մեկ ամիս, սակայն այդ դպրոցում գույքի հանձնում-ընդունում չի կատարվել: Բերդից տեղեկացանք, որ Ա. Ջուլհակյանը դուրս չի գալիս տնօրենի աշխատասենյակից, ուստի Շուշանիկն ամբողջ օրն անցկացնում է ազատ դասարաններում: Անահիտը դասղեկների միջոցով ծնողներին կանչում է իր սենյակ՝ խնդիրներ քննարկելու եւ լուծում գտնելու համար, ինքն է դասացուցակ փոխում, հրամաններ տալիս: Ըստ էության, տնօրենի պարտականություններն է իրականացնում: Հիմա դպրոցում անառողջ մթնոլորտ է, եւ կոլեկտիվը բաժանվել է մասերի: Օրինակ, մեզ փոխանցում են, որ կենսաբանության ուսուցչուհի Անահիտ Ջուլհակյանը որպես տնօրեն պաշտոնավարելով՝ համատեղությամբ թույլատրվող 8 դասաժամ պարապելուց զատ, եւս 2 դասաժամ է պարապել, սակայն այդ ժամերը գրվել են ուրիշի անունով:

Զանգահարեցինք Շուշանիկ Ջուլհակյանին՝ նոր պաշտոնակատարին: Նա ասաց, որ այդ պահին զբաղված է, որ հետո զանգահարենք, եւ այդպես էլ չպատասխանեց զանգերին: Զրուցեցինք նախկին տնօրենի՝ Անահիտ Ջուլհակյանի հետ: Նա ասաց, որ դպրոցի կնիքը Շուշանիկ Ջուլհակյանի մոտ է: 60-ամյա Ա. Ջուլհակյանը հայտնեց, որ մասնակցում է դպրոցի տնօրենի թափուր հաստիքը զբաղեցնելու մրցույթին, առաջին՝ գրավոր փուլն անցնելու համար 2 միավոր չի հերիքել, իր կողմից աշխատանքում ուղղումներ են կատարվել, որի արդյունքում այդ փուլը հաղթահարել է: Սակայն դեռ կա մրցույթի եւս մի փուլ: Ա. Ջուլհակյանը ժխտեց, որ ինքն ապօրինի կերպով 2 դասաժամ պարապում է, ասաց, որ ապրիլի 6-ին, օրվա երկրորդ կեսին դպրոցի գույքի հանձնում-ընդունում է կատարվելու: Կրթօջախում տիրող երկիշխանության վերաբերյալ էլ նշեց, որ Շուշանիկ Ջուլհակյանի՝ տնօրենի պարտականությունները կատարող լինելը չի նշանակում, որ նա դպրոցի տնօրենի պաշտոնակատար է, դրանք տարբեր կարգավիճակներ են: Սնահիտի խոսքերով, «իր՝ տնօրեն լինելն ընթացքի մեջ է», տնօրենի հաստիքը զբաղեցնելու մրցույթի արդյունքում, այժմ դպրոցում ինքն աջակցում, խորհրդատվություն է իրականացնում: Հարցրի՝ ճի՞շտ է, որ մասնակցել է մի քանի օր առաջ կայացած ՔՊ կուսակցության 8-րդ համաժողովին: Սկզբում ժխտեց, հետո խոստովանեց՝ պնդելով, որ դա կապ չունի դպրոցի հետ: Հարցրի նաեւ՝ ճի՞շտ է, որ բնակարան է գնել եւ Բերդ քաղաքում, եւ Երեւանում: Ասաց, որ Բերդի բնակարանը 10 տարի Չինաստանում աշխատած, այժմ ԱՄՆ-ում ապրող իր աղջիկն է գնել՝ իր աշխատած գումարներով, իսկ Երեւանի բնակարանն ընտանիքով՝ վարկով են գնել: Խոսելով Շուշանիկ Ջուլհակյանի մասին՝ Անահիտն ասաց, որ վերջերս իմացել է, որ նա աղանդավորական, կրոնական ինչոր ուղղության հետեւորդ է, սակայն ինքն այդ մասին աշակերտների ծնողների հետ հարկ չի համարել խոսել:

Ասաց նաեւ, որ գիտի, թե ով է իր դեմ բողոքում: Հարցրի նաեւ, որ մեզ տեղեկացրել են, թե դպրոցում անվճար սնունդ ստացող աշակերտներից ամսական 1000 դրամ են հավաքում: Հայտնեց, որ օրական աշակերտներից 50-ական դրամ են հավաքում, որն ամսվա կտրվածքով կարող է 550 կամ 600 դրամ կազմել, քանի որ անվճար սնունդը չոր է, այն մահավաքությունից են անտեղյակ, այլեւ ավելի քան մեկ ամիս Բերդի թիվ 1 դպրոցում տիրող երկիշխանության, քանի որ մարզպետն ու կրթության վարչությունը միջոցներ չեն ձեռնարկել՝ դրան վերջ դնելու, գոնե դպրոցում գույքի հանձնում-ընդունում կատարելու համար:

Թեեւ մարզպետի աշխատակազմի կայքը հայտնում է, որ մարզպետ Ղալումյանը մարտի 10-ին եւ 24-ին աշխատանքային այցեր է

կատարել Բերդ համայնք: Թե ինչու մարզպետը չի այցելել իր ենթակայությամբ գործող, 351 աշակերտ ունեցող Բերդի թիվ 1 դպրոց, չգիտենք: Գուցե պատճառն այն է, որ ՔՊ կուսակցության նախընտրական ցուցակի 49-րդ համարը զբաղեցնող Հայկ Ղալումյանին պետք է, որ ՔՊ ակտիվիստ, կուսակցության 8-րդ համաժողովի մասնակից Անահիտ Ջուլհակյանը մնա դե ֆակտո տնօրեն: Առջեւում հունիսի 7-ն է, ԱԺ ընտրություններում իշխող կուսակցության համար քվեներ ապահովելու խնդիր կա:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՖԻԼՄԵՐ, ՈՐՈՆՔ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

Ամերիկյան արտադրության Powder կինոնկարն էկրան է բարձրացել 1995 թվականին: Ռեժիսորն է Վիկտոր Սալվան: Ստեղծվել է Hollywood Pictures-ում: Կինովարձույթ է մտել 1995 թ. հոկտեմբերի 27-ին: Գլխավոր դերերում են Շեյն Պատրիկ Ֆլաներին, Մերի Սթինբուրգենը, Լանս Հենրիկսենը եւ Ջեֆ Գոլդբլամը: Կինոնկարը համադրում է գիտական ֆանտաստիկայի, սոցիալական դրամայի եւ փիլիսոփայական առակի ժանրային տարրերը՝ բարձրացնելով մարդու էությանը, իրենից տարբեր մարդու հանդեպ վերաբերմունքին առնչվող հարցեր: Կինոնկարի բյուջեն եղել է 9,5 միլիոն դոլար: Կարողացել է ունենալ կինովարձույթում 30,9 միլիոն դոլար: Ֆիլմը պատմում է Ջերեմի Ռիդի մասին, մականունը՝ Powder: Նա ունի անսովոր սպիտակ մաշկ, չունի մազածածկույթ, նման է ալբինոսի: Համաձայն սյուժեի, Ջերեմիի մայրը մահացել է հղի ժամանակ՝ կայծակի հարվածից: Երեխային հրաշքով են փրկել: Ջերեմիին դաստիարակել են տատիկն ու պապիկը՝ ֆերմայում: Նա գործնականում արտաքին աշխարհի հետ շփում չի ունեցել: Գիտելիքների եւ ճանաչողության միակ աղբյուրը եղել են գրքերը: Երիտասարդ Ջերեմին ունի բացառիկ ինտելեկտ: Բարեկամների մահվանից հետո իշխանություններն ընդունում են նրան դպրոց: Դասերն ավարտելուց հետո նա ցանկանում է ուսանել Հարվարդի համալսարանում: Դիմումի ուղարկումից հետո նրան հրավիրում են հարցազրույցի: Ինչպես ասում է հարցազրույցավարը, Ջերեմին ունի բացառիկ ինտելեկտ: Բարեկամների մահվանից հետո իշխանությունները երիտասարդին հայտնաբերում են ֆերմայի տան նկուղում եւ ուղարկում դեռահասների խնամքի հաստատություն: Սակայն հասարակության հետ ադապտացիան շատ դժվար է ստացվում: Անսովոր արտաքինի եւ տարօրինակ ունակությունների պատճառով՝ Ջերեմին հասակակիցների կողմից դառնում է ծաղրի եւ ագրեսիայի առարկա: Աստիճանաբար պարզվում է, որ տիրապետում է անսովոր հոգեֆիզիոլոգիական կարողությունների: Կարողանում է կարդալ մարդկանց մտքերն ու էմոցիաները, կառավարել էլեկտրաէներգիան: Հատկապես սիմվոլիկ է կինոնկարի վերջին դրվագը, երբ Ջերեմին կայծակի հարվածից հետո անհետանում է, տեղափոխվում այլ գոյության վիճակ: Կինոնկարի երաժշտությունը գրել է Ջերի Գոլդսմիթը, ինչը հավելյալ շուք է տվել ժապավենին: Կինոժապավենի ստեղծումն ուղեկցվել է սկանդալով: Ռեժիսոր Սալվան անչափահաս դերասանների նկատմամբ բռնություն գործադրելու համար երիտասարդ տարիքում դատապարտված է եղել: Այդ պատճառով դեռ ստեղծման փուլում կոչեր են հնչել՝ բոյկոտել կինոնկարը: Այն հետաքրքիր կինոնկար է, որը ստիպում է եւս մեկ անգամ մտորել համամարդկային արժեքների, համակեցության ու մարդկային էության մասին:

«Երիտասարդ Վիկտորյա» պատմական դրաման էկրան է բարձրացել 2009 թվականին: Սա պատմական հետաքրքիր ֆիլմ է՝ նվիրված Բրիտանիայում ամենաերկարը գահակալած թագուհուն՝ Վիկտորյային: Կինոնկարը պատմում է քաղաքական բարդ իրավիճակի, պալատական ինտրիգների, իշխանության համար պայքարի, երիտասարդ գահաժառանգ արքայադստեր սիրո եւ ապագա ամուսնու՝ արքայազն Ալբերտի հետ ծանոթության մասին: Ռեժիսորը Ժան Մարկ Վալեն է: Գլխավոր դերում հանդես է եկել Էմիլի Բլանթը: Արքայազն Ալբերտի կերպարը մարմնավորել է Ռուպերտ Ֆրիենդը: Կինոնկարի պրոդյուսերն աշխարհահռչակ Մարտին Սկորսեզեն է: Դեպքերը ծավալվում են 19-րդ դարում: Վիլյամ 4-րդ թագավորի մահվանից հետո երիտասարդ գահաժառանգ՝ արքայադուստր Վիկտորյան հայտնվում է բարդ քաղաքական պայքարի եւ պալատական ինտրիգների կենտրոնում: Կինոնկարում ցույց է տրված, թե ինչպես է Վիկտորյան ազատվում մոր ու ազդեցիկ պալատականների խնամակալությունից եւ ձեռք բերում ինքնուրույնություն: 1837 թվականին գահ բարձրանալուց հետո (ի դեպ, բրիտանական միապետներից ամենաերկարն է իշխել՝ մինչեւ 1901-ը) սկսում է ձեւավորել սեփական քաղաքական հայացքները եւ աստիճանաբար բարձրացնում է բրիտանական միապետի հեղինակությունը՝ սահմանադրական միապետության պայմաններում: Կարեւոր գիծ են Վիկտորյայի եւ արքայազն Ալբերտի հարաբերությունները: Նրանց ամուսնությունը ոչ միայն դինաստիական ամուսնություն էր, այլ նաեւ՝ խոր անձնական զգացմունքների արդյունք: Ալբերտը կինոնկարում պատկերված է որպես սկզբունքային եւ կրթված մարդ, որը ստանձնում է թագուհի կնոջ գլխավոր հենարանի եւ խորհրդականի դերը: 1840-ին նրանք ամուսնանում են եւ Եվրոպայի պատմության մեջ համարվում են ամենից հայտնի զույգը: Իրականում էլ արքայազն Ալբերտը Վիկտորյա թագուհու կառավարման շրջանում բրիտանական հասարակական եւ մշակութային կյանքում մեծ ազդեցություն է ունեցել, որը կոչվում է նաեւ Վիկտորիանական դարաշրջան: Կինոնկարն աչքի է ընկնում պատմական միջավայրի, ժամանակի եւ մթնոլորտի դետալային մանրակրկիտ վերակերտմամբ: Դրա համար էլ այն արժանացել է կինոդիզայնի համար լավագույն մրցանակի՝ 82-րդ Academy Awards-ի ժամանակ: Ֆիլմը հետաքրքիր կարող է լինել բոլոր նրանց համար, ովքեր սիրում են պատմական դրամաներ եւ հատկապես՝ բրիտանական կինոն:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԹԵ ՎԱՏԻ ՈՒ ՎԱՏԱԳՈՒՅՆԻ, ԱՅԼ ՍԽԱԼԻ ՈՒ ՃՇՏԻ ՄԻՋԵՎ Է

Պուտին-Փաշինյան վերջին հանդիպումը ցույց տվեց, որ սպասվելիք ընտրություններում Հայաստանի ընտրությունն այլեւս ոչ թե Լեւոն Տեր-Պետրոսյանի ասած՝ վատի ու վատագույնի, այլ սխալի ու ճշտի միջեւ է լինելու: Ընդ որում, Հայաստանը պատմության սխալ կողմում դնող օրակարգը, ցավոք, ոչ թե Պուտինի, այլ Նիկոլ Փաշինյանի օրակարգն է:

Ու հարցն այս առումով ոչ իր կայսրապետական նկրտումներից Ռուսաստանի հրաժարումն է եւ ոչ էլ հայ-ռուսական դարավոր բարեկամությունը: Հարցը նաեւ Ռուսաստանից Հայաստանի ունեցած հսկայական տնտեսական կախվածությունը չէ եւ ոչ էլ Ռուսաստանի երկու միլիոնանոց հայկական սփյուռքի գոյությունը: Հարցը Նիկոլի առաջարկած օրակարգի ժամանակավրեպությունն է:

Այս մարդն ու իր խմբակը, թեեւ բոլորից շատ են խոսում աշխարհի փոխված լինելու ու Հայաստանի փոխվելու անհրաժեշտության մասին, միեւնույն է, նրանք, ինչպես ժամանակին չեն հասկացել, այնպես էլ շարունակում են չհասկանալ, որ աշխարհն ինչքան էլ փոխվի, միեւնույն է, նա երբեք չի փոխվի այնքան, որ միայն դեմոկրատական օրակարգերով կառավարվի:

Իհարկե, շատ է եղել այնպես, որ աշխարհին դեմոկրատիա «սովորեցնողներն» այդ նույն դեմոկրատիան ու դեմոկրատական օրակարգերն իրենց երկրների շահերի համար օգտագործեն, բայց երբեք չի եղել այնպես, որ նրանք իրենց երկրների շահերը դեմոկրատական օրակարգերին ծառայեցնեն: Եվ քանի որ իրենք՝ որպես Հայաստանը ութ տարի կառավարած խմբակ, բազմաթիվ անգամներ են ապացուցել, որ չեն կարողանում պետությունն առանց դեմոկրատիայի իմիտացիա ստեղծելու կառավարել, քանի որ ապացուցել են, որ չեն կարողանում Հայաստանի նվաճումները դեմոկրատական իմիտացիայի շրջանակներից դուրս չփնտրել, ուրեմն պետք է գոնե մարդավարի հեռանալ կարողանան:

Պետք է մարդավարի հեռանալ կարողանան, որովհետեւ, երբ իրենք չեն հեռանում, իրենք իրենց չհեռանալով հայաստանյան հասարակության մի մասին ստիպում են, որ նրանք իրենց ձայնը տան ոչ թե տարածաշրջանային խաղաղությանը, այլ տարածաշրջանային «խաղաղության իմիտացիան» Հայաստանի վրա՝ իշխանություն պահելու գնով վաճառել ցանկացողներին:

Պետք է հեռանան, որովհետեւ, երբ իրենք մնում են, իրենք իրենց մնալով հայաստանյան հասարակության մի հատվածի ստիպում են, որ նրանք ոչ թե 21-րդ դարի բանակ ու 21-րդ դարի ռազմարդյունաբերություն ունենալու, այլ դրանք չունենալու օգտին քվեարկեն:

Պետք է հեռանան, որովհետեւ, երբ իրենք հայաստանյան քաղաքականության մեջ չեն լինի, իրենց այդտեղ չլինելով իրենք հայաստանյան հասարակության մի մասին կազատեն, Հայաստանի արտաքին քաղաքականության ու երկրի տնտեսության իրական դիվերսիֆիկացման փոխարեն, թուրք-ադրբեջանական տանդեմից կախվածություն ունեցող Հայաստանի օգտին քվեարկելու բեռից: Եվս մի հանգամանք, որին հատկապես կարեւոր է անդրադառնալ: Կարեւոր է, որովհետեւ խոսքն այս ճակատագրական ընտրություններում պետությանն ու նրա ապարատի գործելակերպին է վերաբերում:

Այս առումով, պետք է հասկանանք, որ այս ընտրությունները քննություն են ոչ միայն Հայաստանի հասարակության, այլ նաեւ Հայաստան պետության համար: 35-ամյա այս պետությունը, ի վերջո, իր կայացածությունն ու հասունությունն ապացուցելու հնարավորությունն է ստացել: Հնարավորություն, որը ոչ թե իշխանությունների աղմուկն ու նրանց մանիպուլյացիաները լսելուց է գալիս, այլ երկիրը փոխելու, այն ավելի ուժեղ ու բարեկեցիկ դարձնելու հայ ժողովրդի կամքից:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

Տավուշի մարզի պետական առողջապահական հիմնարկներում կան բժիշկների թափուր հաստիքներ: Որոշ հաստիքներ էլ զբաղեցնում են տարեց, կենսաթոշակառու բժիշկները: Տավուշի մարզպետի աշխատակազմը հայտնում է, որ Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում «Բուժական գործ» մասնագիտությամբ Տավուշի մարզի համար սահմանված է 5 նպատակային ուսուցման տեղ: Նպատակային տեղերում ընդունված ուսանողները սովորում են անվճար եւ ուսումնառության ընթացքում ստանում են կրթաթոշակ: Նպատակային տեղերում ընդունված դիմորդները պայմանագիր են կնքելու ՀՀ առողջապահության նախարարության հետ, որի համաձայն՝ ուսումն ավարտելուց եւ ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ձեռք բերելուց հետո պարտավորվում են վերադառնալ հարազատ մարզ եւ առնվազն 3 տարի ժամկետով աշխատել մարզի բժշկական կազմակերպություններում: Սա վատ տարբերակ չէ, եւ այս մեխանիզմը հատկապես լայնորեն կիրառվում էր Սովետական Միությունում, երբ բուհերի շրջանավարտները պարտավոր էին երկու տարի աշխատել մարզերում, ապա նոր կարող էին վերադառնալ եւ աշխատանքի ընդունվել մայրաքաղաքում: Հատուկ հանձնաժողովները 5-րդ կուրսեցիներին առաջարկում էին ընտրություն կատարել, թե որ մարզում են ուզում աշխատել, իսկ սահմանամերձ գյուղերում նույնիսկ հավելավճար էին ստանում: Իհարկե, ավելի ճիշտ կլիներ մարզերում աշխատող բժիշկների աշխատավարձերը, աշխատանքային պայմանները բարելավել, որպեսզի նպատակային ուսուցման տեղերում սովորած, մարզեր գործուղվածները 3 տարի անց չհեռանային մարզի բուժհիմնարկներից՝ կրկին առաջացնելով թափուր հաստիքներ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 7.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՆԻԿՈԼԻԶՄԻ «ՖԵՆՈՄԵՆԸ». ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՂԹԱՐՇԱՎԸ» ԿԱՆԽԵԼՈՒ ՓՈՐՁ



2020թ. 44-օրյա պատերազմում կանխորոշված պարտության տանելուց հետո Նիկոլիզմը մեկ խնդիր է լուծում՝ ամեն գնով պահել իշխանությունը, ստորադասելով պետական ու ազգային շահերը, կատարելով թշնամու բոլոր պահանջները, մուրալով «խաղաղության պայմանագիր»՝ ստորացուցիչ պայմաններով, եւ տանելով վերջնական կապիտուլյացիայի:

Մաս 5

Դեռեւս 2019-ից նկատելի էր, որ «հեղափոխական» իշխանությունները՝ Փաշինյանի գլխավորությամբ, մեղմ գնահատականներով, պետական կառավարման համակարգի բարեփոխումների մասին հայտարարելով, մանիպուլյատիվ ձեւերով սնում են ժամանակին ընտրակաշառքով քվեարկած ընտրազանգվածին, որին ժամանակի ընթացքում դարձրին իրենց հիմնական հենարանը:

Նույնիսկ պատերազմում պարտությունից հետո Նիկոլ Փաշինյանը որեւէ հետեւություն չարեց, ավելին՝ նիկոլիզմն էլ ավելի ընդլայնվեց՝ խորացնելով քաղաքական-տնտեսական ճգնաժամը, միաժամանակ սկսեց ձեւավորել շարասյուներ՝ իրեն սպասարկելու նպատակով: Անզեն աչքով նկատելի էր, որ Նիկոլը շարունակում է սեւ ու սպիտակի բաժանելու վտանգավոր քաղաքական գիծը՝ թույլ չտալով որեւէ այլընտրանքային ուժային կենտրոն ձեւավորել:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ 2020թ. վերջերից փորձում էինք քննարկումներ նախաձեռնել այլընտրանքային ուժային կենտրոնի ձեւավորման համար: Մեր քննարկումներում որդեգրվել էր հետեւյալ մոտեցումը՝ փորձել բանակցել եւ ներգրավել բոլոր այն ուժերին, որոնք բացահայտ չէին սպասարկում ու չէին պաշտպանում ոչ օրվա իշխանություններին, ոչ էլ նախկիններին: Կարճ ժամանակամիջոցում բանակցեցինք մեկ տասնյակից ավելի քաղաքական ուժերի հետ, 2020թ. դեկտեմբերի 30-ին յոթ կուսակցությունով հանդես եկանք համատեղ հայտարարությամբ՝ առաջին անգամ մերժելով նոյեմբերի 9-ի կապիտուլյացիոն հայտարարությունը: Շարունակվում էին բանակցությունները տարբեր ուժերի հետ:

Համագործակցությանը ներգրավված կուսակցությունների մոտ սկսվեցին բարդություններ, երբ քննարկվում էր վարչապետի թեկնածուի հարցը: Ցանկալի էր այնպիսի թեկնածու առաջադրել, որն ավելի լայն համախմբման հնարավորություն կտար, թեկուզ թեկնածուն ներկայացված կուսակցություններից չլիներ, որով նաեւ հանրությունն ազդակներ կստանար ազդեցիկ ուժային կենտրոնի ձեւավորման մասին: Վարչապետի թեկնածուի շուրջ քննարկումները ծանր մթնոլորտում էին ընթանում, երբեմն նաեւ վերջնագրի լեզվով:

Համախմբման ընդլայնում չէր ստացվում, եւ արդեն ակնհայտ էր, որ այլընտրանքային ուժային կենտրոնը չի ձեւավորվում, կամ թույլ չեն տալիս, ուստի ստեղծված իրավիճակում մեր կուսակցությունը որոշեց չմասնակցել ընտրություններին, քանի որ հիմնական պայքարը գնալու էր օրվա իշխանությունների եւ նախկինների միջեւ, մնացածն ապահովելու էին «մրցակցային» ընտրությունների քողածածկույթ:

ՀԳ. *Նիկոլիզմի «ֆենոմենը» հաճախ ներկայացնում են որպես պոպուլիզմ, բայց իրականում «մերն ուրիշ է» տարբերակն է գործում, որը հակիրճ կարելի է ձեւակերպել ստի, կեղծիքի, շանտաժի, մանիպուլյացիայի, ուրացման, կոռուպցիոն սխեմաների, փողերի լվացման, հովանավորչության բացահայտ դրսեւորումներով, մարդկային տեսակով՝ սրիկայության, պատասխանատվության, մեղքի զգացողության, ազգային արժանապատվության իսպառ բացակայության համադրմամբ, ինչն արդեն լրջագույն վտանգ է ներկայացնում մեր պետականությանը:*

Պետրոս ՄԱԿԵՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am